2016 I - XII

# Իրավապաշտպանների և ակտիվիստների մեդիախոցելիության ինդեքսը



# Իրավապաշտպանների և ակտիվիստների մեդիախոցելիության ինդեքսը

*2016 թ. հունվարից դեկտեմբեր*

Երևան 2017

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5
Ի 894

վերլուծաբան՝ Ժաննա Անդրեասյան
հետազոտողներ՝ Անահիտ Հարությունյան, Սոնա Մանուսյան
իրավապաշտպան փորձագետ՝ Էդուարդ Դանիելյան
աջակիցներ՝ Արփի Մանուսյան, Աննա Ժամակոչյան, Էվելինա Գյուլխանդանյան

սրբագրիչ՝ Ալետա Հակոբյան
գրաֆիկական ձևավորող՝ Գարիկ Ենգիբարյան

**Ի 894** | **Իրավապաշտպանների և ակտիվիստների մեդիախոցելիության ինդեքսը.** 2016 թ. հունվարից-դեկտեմբեր .- Եր.: Սոցիոսկոպ ՀԿ, 2017.- 89 էջ:

ՀՏԴ 316
ԳՄԴ 60.5

«Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ
Socioscope Societal Research and Consultancy Center NGO

Նորվեգիայի Հելսինկյան կոմիտե
Norwegian Helsinki Committee

ISBN 978-9939-1-0552-9

Սոցիոսկոպ ՀԿ, 2017
Socioscope NGO, 2017

Բովանդակությունը օգտագործելի և տարածելի է միմիայն Սոցիոսկոպ ՀԿ-ի անունը նշելու և հղում կատարելու պարտադիր պայմանով և ոչ առևտրային նպատակներով:

***«Իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիության ինդեքսը հայաստանյան առցանց լրատվադաշտում»*** *հետազոտությունը իրականացվել է «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոնի կողմից Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի աջակցությամբ: Այն միտված է առցանց լուսաբանման հետևանքով թիրախային այս երկու խմբերի խոցելիության չափմանը: Իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիությունը հաշվարկվել է ԶԼՄ-ի մշտադիտարկման ու ԶԼՄ տեքստերի կոդավորման, լուսաբանման թիրախ հանդիսացած անձանց հարցազրույցների, փորձագիտական և հանրային հարցումների միջոցով: Հաշվետվությունն ամփոփում է 2016 թվականի հունվարից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի ուսումնասիրության արդյունքները:*

*Հետազոտությունը հնարավոր է եղել իրականացնել իրավապաշտպանության և մեդիաոլորտի բազմաթիվ գործընկեր կազմակերպությունների և անհատ փորձագետների հետ համագործակցության շնորհիվ, ինչի համար նրանց հայտնում ենք մեր շնորհակալությունը:*

# Բովանդակություն

**Մեթոդաբանական ներածություն.**
հանդուրժողականությունից խոցելիություն 7

**Գլուխ 1**
2016-ը իրավապաշտպանական և ակտիվիստական դիտանկյունից 14

**Գլուխ 2**
Հայաստանյան առցանց մեդիադաշտի նկարագիրը 2016-ին 24

**Գլուխ 3**
Իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիությունը հայաստանյան առցանց մեդիադաշտում. մեդիամոնիտորինգի տվյալներ 29

**Գլուխ 4**
Իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիությունը հայաստանյան առցանց մեդիադաշտում. լուսաբանման թիրախ խմբերի/անձանց դիտանկյունը 57

**Գլուխ 5**
Իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիությունը հայաստանյան առցանց մեդիադաշտում. հանրային ընկալում և փորձագիտական գնահատականներ 62

**Հավելված 1**
Մեդիամոնիտորինգի կոդավորման թերթիկ 68

**Հավելված 2**
Փորձագիտական գնահատման հարցաթերթ 76

**Հավելված 3**
Հանրային ընկալման հարցաթերթ 82

**Հավելված 4**
Լուսաբանման թիրախ խմբերի/անձանց հարցաթերթ 87

## Մեթոդաբանական ներածություն. հանդուրժողականությունից խոցելիություն

2016 թվականի հունվարին «Սոցիոսկոպ»-ը հրապարակեց իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ առցանց մեդիայի հանդուրժողականության ինդեքսի 2015 թվականի չափման տվյալները: Դրանց համաձայն՝ անհանդուրժողականության բացահայտ դրսևորումները հայաստանյան առցանց մեդիադաշտում սակավ էին: Այս առումով ուսումնասիրված տասը լրատվամիջոցներից առանձնանում էր միայն «Իրավունք»-ը, որի խմբագիրը Media.am-ի հետ հարցազրույցում բացեիբաց հպարտանում է նման դիրքորոշմամբ: Մեջբերենք մի խիստ բնութագրական հատված այդ հարցազրույցից[1].

- **Անհանդուրժողական, ծայրահեղ ազգայնական մոտեցումները թերթի վաճառքին նպաստու՞մ են. լսարանի որևէ հատված կա՞, որն այդպիսի տեղեկատվություն է ուզում:**
- Բնականաբար: Բաներ կան, որ մեր ժողովուրդը չի սիրում: Մեր հանրությանը խորթ է սուտ հանդուրժողականության տիրույթը, դա չի ընդունում մեր հանրությունը: Անշուշտ, այլ տերմինաբանությամբ նույն հարցերը կբնորոշեի…
- **Որտեղի՞ց գիտես, թե ո՛րն է սուտը, ո՛րը՝ անկեղծը, կամ ի՛նչ է ընդունում մեր հանրությունը և ինչ չի՛ ընդունում:**

[1] *Տե՛ս Հայաստանի թերթերի ապագան. Իրավունք: (10.03.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.media.am/Hovhannes-Galajyan-Iravunk-Newspaper:*

- Հետադարձ կապը կա:
- **Այսինքն՝ այդ գաղափարները ոչ թե քո ինքնահամոզումն են, այլ տուրք ես տալիս հետադարձ կապով եկած կարծիքին:**
- Իմ համոզումն է, որ ազգային սեփական դեմքը պիտի պահենք: «Սոցիոսկոպ» կառույցը անհանդուրժողականության ցուցանիշով ճանաչել է առաջատար «Իրավունք» թերթը: Բայց հանդուրժողականության և ոչ հանդուրժողականության ցուցանիշները, որոնցով արվել է ուսումնասիրությունը, մեզ համար «ներմուծողի» անընդունելի ցուցանիշներ են»[1]:

Իհարկե, հաշվի առնելով, որ «Իրավունք»-ն այս պարագայում սպիտակ ագռավ էր ուսումնասիրված մնացյալ ինը առցանց լրատվամիջոցների ֆոնին[2], կարելի էր կարծել, թե իրավիճակն այդքան էլ վատ չէ: Այս փաստը, սակայն, ոչ այնքան վկայում էր մեդիադաշտում իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ անհանդուրժողականության ոչ ակտուալ լինելու մասին, որքան ցուցանում խնդիրների ավելի խորքային հասկացման անհրաժեշտությունը:

Հանդուրժող լինելն այն կոչն է, որով կարծես ամենքս անընդհատ դիմում ենք մեկմեկու: Ընդ որում՝ հանդուրժողականությունն այստեղ դիտարկելով բացառապես դրական իմաստով: Իրականում հանդուրժողականությունը խնդրահարույց եզրույթ է, որ, միավորելուն կոչված լինելով, առավելապես սահմանազատում է հանդուրժողին ու հանդուրժվողին: Հանդուրժել բառն իսկ ելնում է այն դրույթից, թե կա տարբեր որևէ մեկը, որին մենք պետք է հանդուրժենք: Այս հարաբերությունը անհամաչափ է, որտեղ հանդուրժողը գերակայող դիրքից տարբերվողին շնորհում է իր հետ համատեղ կեցության իրավունք: Հարաբերության շրջանակներում հանդուրժվողը միայն կրողի դիրքում է՝ դրան արձագանքելու անհնարինությամբ: Այսպիսով՝ առաջին հայացքից կարծես թե այնքան դրական եզրույթը լեգիտիմացնում է արդի հասարակարգում իրերի դրությունը՝ քողարկելով իրականում անհավասար հարաբերությունները հանդուրժողականության ներքո:

---

[2] *Իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ առցանց մեդիայի հանդուրժողականության ինդեքսի հաշվարկի համար ընտրանքը կատարվել էր՝ ելնելով մոնիտորինգի նախընթաց ամսվա ընթացքում այդ թեմային առավել հաճախ անդրադարձած առցանց լրատվամիջոցների ցանկից և ընտրելով թեման առավել ինտենսիվ լուսաբանող տասը առցանց լրատվամիջոցները, որոնք հետևյալներն էին՝ aravot.am, a1plus.am, armtimes.com, epress.am, 1in.am, news.am, iravunk.am, tert.am, azatutyun.am, lragir.am: Առավել մանրամասն տե՛ս http://socioscope.am/wp-content/uploads/2016/02/Media_Tolerance_Index.pdf:*

Խնդիրը քաղաքական է և պատմական արմատավորվածություն ունի: Մասնավորապես, հանդուրժում՝ տոլերացիա եզրի հայտնի առաջին գործածումն էլ վերաբերում է քաղաքական հանդուրժման դեպքին՝ բնութագրելով իշխանություններից համապատասխան թույլտվություն ունենալու իրավիճակը դեռևս 15-16-րդ դարում[3]:

Իհարկե, այս քննարկումը հարուստ պատմություն ունի՝ մի շարք տարաժամանակ ու զուգահեռ հետաքրքիր բանավեճերով: Նշված քննարկման շրջանակներում է, որ առաջ է քաշվել այլ՝ ընդունում եզրը՝ դրա տակ հասկանալով հանդուրժելուց մեկ քայլ առաջ գնալը՝ դիմացինին իբրև հավասարի ընդունելը[4]:

Այնուամենայնիվ, թե՛ հանդուրժողականության, թե՛ ընդունման պարագայում այդ եզրույթների ճանաչողական ներուժը մնում է սահմանափակ՝ կաշկանդվելով քաղաքական շրջանառության ավանդույթներով ու կաղապարներով: Բացի այդ՝ հանդուրժողականության գաղափարն իսկ առաջ է գալիս հանդուրժվելու կարիք ունեցողների առկայությունից, սակայն, զարմանալիորեն սահմանվում է մի եզրով, որում իր՝ թիրախ լինելն առավելապես կարծեցյալ է: Այսինքն՝ հանդուրժողականություն/անհանդուրժողականությունը, ինչպես և ընդունում/չընդունումը բնութագրում է հանդուրժողին/ընդունողին, որը կարծես թե առանց այդ էլ հասարակական հարաբերություններում և իրադրությունում առավել նպաստավոր տեղ է զբաղեցնում: Ուստի, կոչված լինելով բարձրացնել չհանդուրժվողի ու չընդունվողի խնդիրը, հանդուրժողականությունը կամ ընդունումը քողարկում է այն:

Սա է պատճառը, որ մեդիայում հանդուրժողականության չափման առանցքի փնտրտուքներում «Սոցիոսկոպ»-ը հարմար գտավ հարցը դիտարկել հենց այն մարդկանց դիտանկյունից, որոնց վերաբերմամբ էլ հրատապ ու արդիական է հնչում ընդունման և հանդուրժման կոչը: Այս տրամաբանությամբ հանդուրժողականությունը սահմանվում է իբրև թիրախի խոցելիություն:

Խոցելիության ներքո այս պարագայում հասկանում ենք ակտորի հնարավորությունները. ինչքանով տվյալ ակտորը տվյալ հանրույթում ունի ինքնադրսևորման,

[3] *Տե՛ս օրինակ՝ Toleration: Stanford Encyclopedia of Phylosophy: 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://plato.stanford.edu/entries/toleration/:*

[4] *Նույն տեղում:*

ինքնապաշտպանության և արժանապատվության հնարավորություններ, ինչքանով և ինչպես են դրանք սահմանափակված, ինչպես է դրսևորվում այդ սահմանափակումը և ինչպես է հաղթահարվում, եթե իհարկե հաղթահարվում է:

Այլ կերպ ասած՝ հանդուրժողականության և/կամ ընդունման ուղղակի հետևանքը պետք է լինի որպես այդ վերաբերմունքի կրող հանդես եկող մարդկանց խոցելիության նվազումը հասարակական հարաբերություններում՝ ընդլայնելով վերջիններիս սոցիալական հնարավորություններն ու կապիտալը տվյալ հանրույթում: Անհանդուրժողականությունն էլ ցուցանում է խոցելիության բարձրացում՝ այդ ակտորների ինքնադրսևորման, ինքնապաշտպանության, ընդհուպ գոյության հնարավորությունների սահմանափակում:

Մեդիայում հանդուրժողականության չափումը հասկանալով իբրև մեդիայի կողմից թիրախավորվող ակտորների խոցելիության չափում՝ հնարավոր է դառնում մեդիայի բարձրագոչվող հանդուրժողականության[5] պարագայում հասկանալ կիրառվող ռազմավարության իրական հետևանքները լուսաբանվող և կամա թե ակամա թիրախավորվող ակտորների վերաբերմամբ: Ինչքանո՞վ է մեդիայում լուսաբանումը նպաստում այդ ակտորների խոցելիության բարձրացմանը և կամ նվազմանը. սա է, որ մեդիահանդուրժողականության չափում է ապահովում, քանի որ թույլ է տալիս հասկանալ իրական մեդիառազմավարություններն ու դրանց ազդեցությունները՝ բացահայտ անհանդուրժող դիրքորոշումների չարտահայտման պարագայում:

Այս մոտեցումը թվում է առավել հիմնավորված առցանց մեդիադաշտում 2016-ին իրավապաշտպանների/ակտիվիստների լուսաբանումը առավելապես առանձին անհատների և խմբերի թիրախավորման միջոցով իրականացնելու ֆոնին[6]:

Առաջինը, ինչ տրամաբանորեն ելնում է խոցելիության՝ իբրև առանցքային եզրի ընդունումից, խոցելիության

[5] *Այս դատողության համար հիմք են վերցված ինչպես 2015 թվականի հանդուրժողականության չափման արդյունքները, որոնք, առերևույթ դրական իրավիճակ ներկայացնելով, ցուցանում են իրականում իրավապաշտպանների և ակտիվիստների՝ մեդիայի դիտանկյունից անտեսանելիության և աննկատության իրադրությունը, այնպես էլ 2015 թ. տվյալների՝ 2016 թ. հունվարի 21-ին Մեդիա նախաձեռնությունների կենտրոնում տեղի ունեցած քննարկման ընթացքը:*

[6] *Այս խնդիրը առավել մանրամասն ներկայացված է սույն հաշվետվության երկրորդ բաժնում:*

կրողի առանձնացումն է, որ այս դեպքում նույնանում է իրավապաշտպաններին/ակտիվիստներին՝ որպես խմբի, անհատի կամ կազմակերպության: Այլ կերպ ասած՝ առցանց մեդիայում իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիության ինդեքսը իմաստ կարող է ունենալ միայն այն կրող սուբյեկտի նկատմամբ չափման պարագայում:

Կրող սուբյեկտի առանձնացումը և վերջինիս խոցելիության չափումը ենթադրում է առցանց մեդիայի լուսաբանումը դիտարկել իբրև դեպքերի լուսաբանում՝ առանձնացնելով այն դեպքերը, որոնք անդրադառնում են իրավապաշտպաններին և ակտիվիստներին: Ընդ որում, նման մոտեցումը կարող է թվալ մեթոդական-կառուցակցված, այսինքն՝ չափման նպատակով մեդիա-դաշտին հաղորդվող մոտեցում, սակայն իրականում այն բխում է մեդիադաշտի առանձնահատկություններից: Այսպես, ինչպես ցույց տվեցին 2015 թ. մեդիամոնիտորին-գի արդյունքները տասը առցանց լրատվամիջոցների պարագայում, ուսումնասիրված լրատվամիջոցների ճնշող մեծամասնությունը իրավապաշտպաններին և ակտիվիստներին թեմատիկ անդրադարձ իրականացնում է միայն իրադարձային հիմքով: Սա առցանց մեդիադաշտի կայուն հետաքրքրության և դրանով իսկ լուսաբանման թեմա չէ, այլ դառնում է այդպիսին այս կամ այն պատճառով հասարակական հնչեղություն ձեռք բերող տեղեկատվական առիթների, իրադարձությունների, դեպքերի լուսաբանման պայմաններում:

Դեպքերի միջոցով առցանց մեդիայում իրավապաշտ-պանների և ակտիվիստների խոցելիության դիտարկումը մեթոդական-վերլուծական տեսանկյունից այդ դիտարկումը վերածում է դեպքի հետազոտման՝ case-study-ի, որը ենթադրում է դեպքի վերաբերյալ ամբողջական, խորը և բազմակողմանի տեղեկատվության ստացում: Խոցելիության ինդեքսի հաշվարկի տեսանկյունից սա նշանակում է բազմաչափ ցուցիչների ընդգրկում, որոնք հաշվի կառնեն այդ ամբողջական և բազմակողմանի տեղեկատվությունը: Մասնավորապես, սա նշանակում է յուրաքանչյուր դեպքի համար խոցելիության թիրախ հանդիսացող ակտորի առանձնացում, մեդիալուսաբանման հետևանքով վեր-ջինիս խոցելիության սեփական ընկալումների մասին տեղեկատվության ստացում նրանից կամ նրա մերձակա շրջապատից: Բացի այդ՝ սա նշանակում է նաև տվյալ դեպքի մեդիալուսաբանման հանրային ընկալման

վերաբերյալ տեղեկատվության ստացում, ինչը թույլ է տալիս հնարավորինս համակշռել լուսաբանման թիրախ հանդիսացող ակտորի կամ վերջինիս հետ փոխառնչված անձանց կողմից ուղղորդված դիրքորոշման ազդեցությունը խոցելիության ընդհանուր ինդեքսի վրա: Պակաս կարևոր չէ նաև խնդրո առարկա դեպքի մեդիալուսաբանման վերաբերյալ փորձագիտական դիրքորոշման ստացումը, որն օգնում է հասկանալ նաև հանրային ընկալման յուրահատկությունները: Երեք տարբեր աղբյուրներով նույն մեդիանյութի ընկալման ու գնահատականի ստացումը անպայմանորեն պետք է զուգորդվի բուն մեդիանյութի չափմամբ: Այս վերջին ուղղությունն էլ իրականացվում է մեդիամոնիտորինգի միջոցով՝ համաձայն նախապես մշակված կոդավորման թերթիկի:

Հետևաբար, առցանց մեդիայում իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիության ինդեքսն ըստ էության բաղկացած է երեք տարբեր ինդեքսներից՝ հաշվարկված ըստ հետևյալ հիմնական բաղադրիչների.

1. լուսաբանման բովանդակային և քանակական մոնիտորինգ[7]
2. լուսաբանման թիրախի արձագանք
3. լուսաբանման հանրային և փորձագիտական արձագանք

Հետևելով սոցիոլոգիայում հայտնի Թոմասի թեորեմին առ այն, որ եթե իրավիճակն ընկալվում է որպես իրական, ապա այն իրական է իր հետևանքով՝ այս բաղադրիչներից վերջինը առավել նշանակալի կշիռ է ձեռք բերում՝ հղում անելով իրավիճակի ընկալմանը մեդիայում ներկայացված իրավիճակը «դիտողների» (փորձագետների պարագայում՝ դիտողների ընկալման վերաբերյալ մասնագիտական գիտելիք կրողների) կողմից: Այս դեպքում հաշվի է առնվում նաև հասարակական ճնշման աստիճանը հայաստանյան հասարակությունում,

[7] *Ընտրված լրատվամիջոցում կոդավորվել են միայն այն հոդվածները, որոնցում եղել է առնվազն մեկ արտահայտություն կամ խոսք մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող գաղափարի, գործողության անձի կամ կազմակերպության վերաբերյալ, որը կարող էր նպաստել տվյալ ակտորի շուրջ խոցելի կերպարի ստեղծմանը կամ հաստատմանը: Այսպիսով, եթե նույնիսկ տվյալ նյութը խնդրո առարկա գաղափարը, գործողությունը, անձին կամ կազմակերպությանը ներկայացնում էր դրական դիրքորոշմամբ, սակայն դիրքավորելով իբրև թույլ, հանրային պաշտպանության կարիք ունեցող, ճնշված, ապա նման նյութը կոդավորվել է որպես պատեռնալիստական կամ հովանավորչական խոցելիություն: Եթե նյութը խնդրո առարկա գաղափարը, գործողությունը, անձին կամ կազմակերպությանը ներկայացնում էր բացասական դիրքորոշմամբ՝ ներկայացնելով իբրև որոշակի ուժ ունեցող, որի դեմ անհրաժեշտ էր պայքարել, բացահայտել և այլն, ապա տվյալ նյութը կոդավորվել իբրև նպատակաուղղված խոցելիություն:*

որի անուղղակի չափումը իրականացված է տարբեր ազգագրական և սոցիոլոգիական հետազոտություններում և վերլուծություններում: Դրա երրորդ բաղադրիչը՝ լուսաբանման հանրային և փորձագիտական (իբրև հանրային արձագանքի փորձագիտական գնահատական) արձագանքը, դասակարգվում է իբրև գերադաս վերոնշյալ երեք ինդեքսների շարքում:

Ինչ վերաբերում է լուսաբանման բովանդակային և քանակական մոնիտորինգին, ապա դա իրականացվում է երեք հիմնական ցուցիչների միջոցով՝

- լրատվամիջոցի բնութագիրը (լրատվամիջոցը բնութագրող վիճակագրական հատկանիշներ),
- հոդվածի բնութագիրը՝ներառյալ այնպիսի բաղադրիչներ, ինչպես նյութի աղբյուրը, ոճը, տեքստային և վիդեո-ձայնա-պատկերային մասի համապատասխանությունը, հոդվածի հեղինակը և այլն,
- թիրախավորված անձի բնութագրիչները[8]:

Առցանց մեդիայում իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիության ինդեքսի հաշվարկը դեպքերի դիտարկման միջոցով բարձրացնում է նաև այդ դեպքերի ընտրության հարցը: Քանի որ այս մոտեցմամբ մեծ կշիռ է տրվում հանրային արձագանքին, դեպքերի ընտրության հիմնական չափանիշը դրանց՝ մեդիայում առավել ինտենսիվ լուսաբանվելու և դրանով իսկ հանրային հնչեղություն ստանալու հանգամանքն է: Դեպքերի ընտրության միջոցով կառուցվել է ուսումնասիրված տասը առցանց լրատվամիջոցների համեմատական կարգային աղյուսակը՝ իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիությանը նպաստելու տեսանկյունից: Այսպիսով՝ նաև տեսանելի է դարձել նույն լրատվամիջոցի՝ տարվա ընթացքում տեղի ունեցած տարբեր դեպքերի շրջանակներում թիրախային խմբերի լուսաբանման ռազմավարության փոփոխությունը կամ կայունությունը: Ինչքանով է նույն լրատվամիջոցը տարվա ընթացքում առավել կամ պակաս նպաստել լուսաբանման թիրախ հանդիսացած իրավապաշտպանի/ակտիվիստի խոցելիությանը. այս հարցի պատասխանը թույլ է տալիս պատկերել նաև կոնկրետ լրատվամիջոցի դինամիկ ինդեքսը տվյալ տարվա համար:

[8] *Մեդիամոնիտորինգի մեթոդական մանրամասները հասանելի են հետևյալ հղմամբ՝ http://socioscope.am/wp-content/uploads/2016/02/Media_Tolerance_Index.pdf: 2015-ի արդյունքներով վերանայված կոդավորման թերթիկը հասանելի է սույն հաշվետվության Հավելված 1-ում:*

# Գլուխ 1

## 2016-ը իրավապաշտպանական և ակտիվիստական դիտանկյունից

2016 թ. ընթացքում Հայաստանում իրավապաշտպանական և ակտիվիստական պրակտիկաները գնահատելիս ամենատարբեր աղբյուրներում և զեկույցներում նշվում է, որ իրավիճակը հետընթաց է ապրել: Մասնավորապես, 2016 թ. ընթացքում ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի հաշվետվություն է հրապարակել Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը[1]: Ըստ ներկայացված տվյալների՝ 2016-ի ընթացքում մարդու իրավունքների խախտումների դեպքերի թիվը կազմել է 338, որը 2015-ի համեմատ շուրջ 11.18%-ով ավել է[2]: Ընդ որում, «Մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 338 դեպքերից 163-ը տեղի են ունեցել հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով: Այս ցուցանիշը նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել է 38-ով (18.9%-ով): Սա այդուհանդերձ, համաձայն հաշվետվության, չի նշանակում, թե իրավիճակը բարելավվել է, որովհետև ի հակակշիռ սրա՝ ավելացել են այսպես կոչված անհատական հետապնդման դեպքերը: «2016 թ.-ին գրանցվել է մարդու իրավունքների

---

1 *Տե՛ս «Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի մասին տարեկան հաշվետվություն (ՁԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)»: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ: (2017): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է www.hcav.am կայքում:*

2 *Նույն տեղում, էջ 12:*

խախտմանը հանգեցրած անհատական բնույթի 168 դեպք: 2015 թ. նույն ցուցանիշի համեմատությամբ (103 դեպք) դեպքերի թիվն ավելացել է 65-ով (38.7%-ով)»[3]:

Ըստ էության, վերոնշյալ հանգամանքը միանգամայն համադրվում է իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ հանդուրժողականությունից վերջիններիս խոցելիությունը շեշտադրելու մոտեցմանը՝ որպես իրավիճակին առավել համարժեք: Ուշադրության է արժանի նաև այն, որ 2016-ի ընթացքում, բացի լայն հանրությանը վերաբերող այս խախտումներից, աղմկահարույց խախտումներ գրանցվեցին նաև ճանաչված իրավապաշտպանների/ակտիվիստների հանդեպ՝ ցուցանելով այս խմբերի խոցելիությունն առհասարակ՝ անկախ հասարակական ճանաչելիությունից:

Մարդու իրավունքների խախտման դեպքերի աճի մասին է վկայում նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կայքէջում տեղադրված պաշտոնական վիճակագրությունը՝ ստացված բողոքների մասով[4]: Ըստ այդմ, 2016-ին միայն Երևանից գրավոր և բանավոր բողոքների թիվը կազմել է 2547՝ 2015 թվականին գրանցված 2425-ի փոխարեն: Ընդ որում, բողոքների զգալի մասը ուղղված է եղել ոստիկանության գործողությունների դեմ: Բողոքների թվով առաջատար են նաև քրեակատարողական հիմնարկները, դատարանները, քննչական կոմիտեն և պաշտպանության նախարարությունը:

Մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակի վատթարացմանը մեծապես նպաստած գործոններից մեկը հասարակության աճող ռազմականացումն էր՝ ղարաբաղյան հակամարտության գոտում ապրիլի սկզբին գրանցված լարվածության աճի ֆոնին: Ռազմականացման պայմաններում հանրային մակարդակում անպատեh է հռչակվում մարդու իրավունքների խնդիրների բարձրաձայնումը՝ իբրև երկրորդական մի բան՝ ազգային անվտանգության և օրհասական այլ հարցերի կարգավորման հրամայականով: Այս հարցերին առավել մանրամասն հասարակագիտական անդրադարձ կա «Սոցիոսկոպ»-ի վերջին հրատարակություններից մեկում[5]:

---

3 *Նույն տեղում, էջ 13:*

4 *Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքի վիճակագրություն բաժինը: 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.ombuds.am/statistics.html:*

5 *Տե՛ս Փոփոխության որոնումներ, Սոցիոսկոպ, 2016 թ.:*

Նշված իրողությունները այս կամ այն չափով արձանագրված են տեղական և միջազգային իրավապաշտպան այլևայլ կազմակերպությունների զեկույցներում[6]: Իրավիճակը բարձրաձայնվել է նաև տարվա ընթացքում իրավապաշտպանների հրապարակային ելույթներում և բանավեճերում:

Ըստ այդմ, եթե տարին դիտարկենք ոչ թե ընդհանուր այս միտումներով, այլ իբրև իրադարձությունների մի ամբողջություն, ապա իրավապաշտպանական և ակտիվիստական խմբերի վերաբերմամբ կարող ենք առանձնացնել հետևյալ առավել մեծ հնչեղություն ստացած դեպքերը.

- **Ակցիայի ժամանակ բերման ենթարկվեց Գևորգ Սաֆարյանը, այնուհետ կալանավորվեց և մեկ տարի անց, ըստ դատավճռի, դատապարտվեց երկու տարի ազատազրկման:** 2015 թ.դեկտեմբերի 31-ի գիշերը «Նոր Հայաստան» շարժման անդամները փորձել էին տոնածառ տեղադրել Ազատության հրապարակում, ինչը ավարտվել էր ոստիկանների և մի խումբ ակտիվիստների միջև բախումով, քանի որ ոստիկանական ուժերը թույլ չէին տվել շարժման անդամներին իրականացնել ակցիան: Միջադեպի հետևանքով բերման էին ենթարկվել ակցիայի մասնակից հինգ քաղաքացիներ, որոնց հետագայում ազատ էին արձակել: Սակայն, ի հաջորդում միջադեպի, հունվարի 3-ին կալանավորվեց «Հիմնադիր խորհրդարան»-ի անդամ, քաղաքական ակտիվիստ Գևորգ Սաֆարյանը՝ ոստիկանի նկատմամբ բռնություն կիրառելու մեղադրանքով (ՀՀ քրեական օրենսգիրք, 316-րդ հոդվածի 1-ին մաս՝ իշխանության ներկայացուցչի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնության գործադրում): Այս գործի շուրջ հայտարարությամբ հանդես եկավ նաև Human rights watch իրավապաշտպան կազմակերպությունը՝ մտահոգություն հայտնելով, որ իշխանությունները Սաֆարյանին որպես թիրախ են ընտրել ընդդիմադիր քաղաքական խմբին անդամակցության և իր քաղաքական համոզմունքների համար: Մեկ տարի շարունակվող դատավարությունից հետո 2017 թ. հունվարի 16-ին ակտիվիստը դատապարտվեց 2 տարի ազատազրկման:

[6] *Տե՛ս օրինակ՝ Amnesty International կազմակերպության՝ Հայաստանին վերաբերող 2016 թ. զեկույցը (https://www.amnesty.org/en/countries/europe-and-central-asia/armenia/report-armenia/), Freedom House կազմակերպության 2016 թ. զեկույցը Հայաստանի վերաբերյալ՝ https://freedomhouse.org/report/freedom-world/2016/Armenia:*

- **Մեղադրանք առաջադրվեց Վարդգես Գասպարիի նկատմամբ, որին հետագայում կալանավորեցին, իսկ քրեակատարողական հիմնարկում ենթարկվեց բռնությունների:** 2016-ի սկզբին անհատական թիրախավորման մեկ այլ դեպք արձանագրվեց քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարիի նկատմամբ: Մասնավորապես, Վարդգես Գասպարիին մեղադրանք առաջադրվեց ՀՀ քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով այն բանի համար, որ նա 2014 թ. ապրիլի 7-ին ՀՀ վարչական դատարանում թիվ ՎԴ/9157/05/13 վարչական գործով նշանակված դատական նիստի ժամանակ նախագահող դատավոր Ռուզաննա Հակոբյանի հասցեին հնչեցրել է հետևյալ արտահայտությունները՝ «Ձեր նման անարժանապատիվ և անինքնասեր դատավորներ են, որ այսօր իրավիճակը հասցրել են այստեղ, միայն այն, որ Եվրոպական դատարաններում Ձեր վճիռների 46-ից 47-ը ճանաչվել են անվավեր, դա պետք է Ձեզ մի քիչ հուզեր, բայց քանի որ դուք անարժան եք և անինքնասեր, որ Ձեր գործակալական գործողությունն եք կատարում»: «Դուք ստոր և անարժանապատիվ դատավորներ եք, որպես գործակալներ այս հանցագործ իշխանությանը պահում եք իրենց գործի վրա»: 2016 թվականի փետրվարի 19-ին դատարանը որոշում է կայացրել Վարդգես Գասպարիի նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը փոխարինել կալանավորմամբ: Նույն օրը Գասպարիին կալանավորել են դատական նիստերին չներկայանալու համար: Նշենք, որ նրան կալանավորելու որոշումը ևս կայացվել է առանց վերջինիս ներկայության՝ օրենքի խախտումով: «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում գտնվելու ընթացքում Վարդգես Գասպարին ենթարկվել է բռնության, խցակիցները նրան պարբերաբար ծեծել են, նվաստացրել, սառը ջուր լցրել վրան[7]: Դեպքի հանրային հնչեղություն ստանալուց և սոլիդարության որոշ ակցիաների իրականացումից հետո Գասպարին ազատ է արձակվել:

- **Ձերբակալվեց Ժիրայր Սեֆիլյանը, որը մինչ օրս գտնվում է ՔԿՀ-ում:** Քննչական կոմիտեի հաղորդագրության համաձայն՝ մի խումբ անձանց կողմից ապօրինի կերպով զենք և ռազմամթերք ձեռք բերելը, փոխադրելը և պահելը կազմակերպելու կասկածանքով 2016 թ.

---

7 *Տե՛ս «Յուման Ռայթս Հաուս Երեւանը» կոչ է անում դադարեցնել Վարդես Գասպարիի նկատմամբ բռնաճնշումները»: (26.02.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.asparez.am/koch_dadarecnel_gasparii_handep_brnachnshumner-hy/#.WNtng1V97IU:*

հունիսի 20-ին ձերբակալվեց «Հիմնադիր խորհրդարան»-ի քարտուղարության համակարգող, «Նոր Հայաստան» քաղաքական շարժման «Ընդդիմության միասնական շտաբ»-ի պետ Ժիրայր Սեֆիլյանը: Համաձայն նույն այդ հաղորդագրության՝ քրեական գործի շրջանակներում համատեղ կատարված քննչական և օպերատիվ-հետախուզական մեծածավալ միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Ժիրայր Սեֆիլյանը մի խումբ անձանց հետ ծրագրել էր զինված խմբավորումների միջոցով, զենքի գործադրմամբ զավթել շենքեր, շինություններ, հաղորդակցության և կապի միջոցներ, այդ թվում՝ Երևանի հեռուստաաշտարակը, ինչի ընթացքում էլ վերջինս կազմակերպել է մի խումբ անձանց կողմից ապօրինի կերպով զենք և ռազմամթերք ձեռք բերելը, փոխադրելը և տարբեր վայրերում դրանք ապօրինի կերպով պահելը: Ընդ որում, խմբի անդամները որոշ հանցավոր գործողություններ ծրագրել էին իրականացնել ապրիլյան պատերազմին հաջորդող ժամանակահատվածում[8]: Սեֆիլյանը մինչ օրս գտնվում է անազատության մեջ:

- **Հուլիս ամսին «Սասնա ծռեր»-ի կողմից ՊՊԾ գունդը գրավվեց, ինչը հետագայում ուղեկցվեց մի շարք հանրային ակցիաներով, հավաքներով, երթերով, որոնց ընթացքում ոստիկանությունն աչքի ընկավ ինչպես խաղաղ հավաքների, ակցիաների անցկացման իրավունքի ոտնահարմամբ, այնպես էլ որոշ ակտիվիստների, իրավապաշտպանների առանձնակի թիրախավորմամբ:** 2016-ի ամենամեծ հնչեղություն ստացած դեպքը, որն ըստ էության իրավապաշտպանների և ակտիվիստների թիրախավորման տեսանկյունից դեպքերի մի շարք էր, հուլիսյան իրադարձությունների փունջն էր: Հուլիսի 17-ին՝ վաղ առավոտյան, տարբեր լրատվամիջոցներ տեղեկություններ տարածեցին, որ նույն օրը՝ ժամը 5-ին, «Հիմնադիր խորհրդարան» քաղաքացիական նախաձեռնության որոշ անդամներ և իրենց համակիրներ՝ «Սասնա ծռեր» խումբը, զենքի օգնությամբ գրավել են Երևանում գտնվող ՀՀ ոստիկանության Էրեբունու պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի զորամասը: Գործողության ժամանակ մի քանի անձինք, այդ թվում՝ ոստիկաններ, ստացել էին մարմնական վնասվածքներ, իսկ ՊՊԾ գնդի հրամանատարի տեղակալ, գնդապետ Արթուր Վանոյանը զոհվել էր: Խմբի անդամները պատանդ էին վերցրել ոստիկանների, որոնց թվում՝ ՀՀ ոստիկանության

[8] *Տե՛ս «Ձերբակալվել է Ժիրայր Սեֆիլյանը»: (20.06.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.civilnet.am/news/2016/06/20/zhirayr-sefilyan-arrested/295307:*

պետի տեղակալ Վարդան Եղիազարյանը և Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանը: Խմբի ներկայացրած պահանջներն էին «Հիմնադիր խորհրդարան»-ի առաջնորդ Ժիրայր Սեֆիլյանի և մյուս քաղբանտարկյալների ազատ արձակումը և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականը: Կարճ ժամանակ հետո ոստիկանության ստորաբաժանումները, օգտագործելով զրահատեխնիկա, փակեցին դեպի Էրեբունու զորամաս տանող ճանապարհը: Հուլիսի 17-ից «Հիմնադիր խորհրդարանի», «Մենք ենք տերը մեր երկրի» նախաձեռնության, մի շարք քաղաքացիական ակտիվիստների, հասարակական և քաղաքական գործիչների կողմից կազմակերպվեցին բազմաթիվ հանրահավաքներ և երթեր ինչպես Երևանում, այնպես էլ Հանրապետության այլ վայրերում: Նշված հավաքները ուղեկցվեցին ոստիկանության կողմից կոպիտ միջամտություններով և աննախադեպ խախտումներով՝ հավաքներն անհիմն դադարեցնելով, հավաքի մասնակիցներին բռնությունների, ծեծի ենթարկելով, նրանց բերման ենթարկելու ընթացքում քաղաքացիական իրավունքները կոպտորեն խախտելով, հավաքների վայրերում խլացուցիչ նռնակներ, արցունքաբեր գազ կիրառելով: Զինված խումբը հուլիսի 31-ին զենքերը վայր դրեց և հանձնեց իրավապահներին[9]:

Այս դեպքերն են, որ կազմել են իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիության չափման հիմնական առանցքը 2016 թվականի համար:

Այդուհանդերձ, կարևոր ենք համարում ընդգծել տարվա ընթացքում գրանցված ևս մեկ կարևոր միտում, որն է կին ակտիվիստների և իրավապաշտպանների թիրախավորումը:

## ԿԻՆ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ՝ ՄԵԴԻԱԴԱՇՏԻ ԹԻՐԱԽՈՒՄ

Տարվա ընթացքում տեղի ունեցան մի քանի դեպքեր, որոնց թե՛ լուսաբանումը, թե՛ հանրային անդրադարձը մեծապես պայմանավորված էր թիրախավորված անձանց՝ կին

[9] *Տե՛ս «Զեկույց 2016 թ. հուլիսի 17-ից օգոստոսի 5-ը Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ»: Հայաստանի Հելսինկյան կոմիտե: (08.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է www.asparez.am կայքում:*

լինելու հանգամանքով և ըստ այդմ դրսևորում էր մի շարք առանձնահատկություններ: Մասնավորապես.

- 2016 թ. մարտի 24-ին «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի «Ընդդիմության միասնական շտաբը» հաղորդագրություն տարածեց այն մասին, որ մարտի 24-ին՝ ժամը 14-ի սահմաններում, «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատի աջակիցները, «Հայ կանանց ճակատի» անդամները և մի խումբ այլ քաղաքացիներ խաղաղ անհնազանդության ակցիա են անցկացրել Մաշտոցի պողոտայի վրա՝ Գևորգ Սաֆարյանին և մյուս քաղբանտարկյալներին ազատ արձակելու պահանջով: Ակցիայի ընթացքում ոստիկանների կողմից անհամաչափ ֆիզիկական ուժ է կիրառվել քաղաքացիների նկատմամբ: Հատկապես մեծ հնչեղություն ստացավ Կարո Եղնուկյանի կնոջ՝ «Հայ կանանց ճակատ» նախաձեռնության անդամ Ռուզաննա Եղնուկյանին գլխի շրջանում վնասվածք հասցնելու դեպքը: Ըստ պաշտպանական կողմի՝ կան համապատասխան տեսանյութեր, որտեղ հստակ երևում է, որ հենց ոստիկաններից մեկն էր ոտքով հարվածել վերջինիս գլխին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Հատուկ քննչական ծառայությունում հարուցվել էր քրեական գործ, ինչը հետագայում կարճվել էր: ՀՔԾ-ի որոշումը Եղնուկյանի պաշտպանը բողոքարկել էր առաջին ատյանի դատարանում, որը նույնպես մերժվել էր:
- Քաղաքագետ, ՄԻԺԻ հիմնադիր Արմինե Առաքելյանը 2016 թ. մայիսի 17-ին Հանրապետության հրապարակի շատրվաններն էր մտել: ԱԻՆ փրկարար ծառայության աշխատակիցները ոստիկանների հետ միասին նրան դուրս էին բերել ու, պաշտոնական հաղորդագրության համաձայն, հանձնել հոգեբուժարանի աշխատակիցներին: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից գրություն էր ստացվել առ այն, որ Ա. Առաքելյանը «Նուբարաշեն» հոգեբուժական կլինիկայում ծեծի է ենթարկվել, ապա նաև Ա. Առաքելյանը հաղորդում էր տվել, որ մայիսի 17-ին «Նուբարաշեն» հոգեբուժական կլինիկայում մի խումբ աշխատակիցներ իրեն կապել են մահճակալին ու ծեծել: Հաշվի առնելով, որ հաղորդումն առերևույթ պարունակում էր հանցագործության հատկանիշներ՝ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել էր քրեական գործ: Արմինե Առաքելյանի վերոնշյալ բողոքի ակցիայից մեկ շաբաթ հետո՝ 2016 թ. մայիսի 24-ին, ակտիվիստ Աննա Շահնազարյանը կրկնեց նույն ակցիան. հանելով իր կոշիկները՝ մոտեցավ ջրավազանին և լուռ նստեց այնտեղ:

Մի խումբ ոստիկաններ, բռնելով Շահնազարյանի ոտքերից և ձեռքերից, հակառակ իր կամքին՝ դուրս հանեցին շատրվանների շրջանակաձև ավազանից: Այդուհանդերձ, որոշ հեռախոսազանգեր կատարելուց հետո ոստիկանները բաց թողեցին նրան՝ չտանելով հոգեբուժարան, ինչպես առաջին դեպքում էր: Հարկ է նշել, որ Աննայի ակցիան ըստ էության հանրային առումով իմաստավորեց Արմինե Առաքելյանի քայլը: Մասնավորապես, Արմինե Առաքելյանի դեպքի լուսաբանումը ի սկզբանե տեղի ունեցավ անդեմ մի իրադրության ներկայացմամբ, ըստ որի՝ հոգեկան ակնհայտ խնդիրներ ունեցող կինը մտել էր հրապարակի ջրավազանը, և վերջինիս տարել են հոգեբուժարան: Մեդիալուսաբանման այս շեշտադրումը իրավապաշտպանին ի սկզբանե պիտակավորեց իբրև հոգեկան խնդիրներ ունեցողի՝ արված քայլն էլ դիտելով իբրև գժություն: Ահա Աննայի կողմից այդ «գժության» կրկնությունը թույլ չտվեց մեդիային հոգեկան հիվանդությամբ իրավիճակի բացատրությունը կիրառել իբրև համարժեք: Այդ ազդեցությունն ավելի նկատելի էր վարքային ռազմավարության տարբերությամբ. առաջին դեպքում քայլն իրականացրած կնոջն անհասկանալի մտքեր բղավող լաչառի կերպարում ցույց տալուն հակադրելով լռությունը: Աննան գործեց մեդիայի դեմ՝ նաև վերականգնելով Արմինե Առաքելյանի իրավունքը: Այս պարագայում մեդիային այլ բան չէր մնում, քան լռության մատնել դեպքը, ինչն էլ խոշոր հաշվով իրականացվեց:

- Չնայած այս դեպքն իրականում «Սասնա ծռեր» զինյալ խմբի գործողությունների հետ կապված խոշոր դեպքի մի դրսևորումն է, այնուամենայնիվ, այն հարկ է առանձնացնել մի շարք պատճառներով: Խոսքը կանադահայ դերասանուհի Արսինե Խանջյանի՝ 2016 թ. հուլիսի 27-ին Երևանի Խորենացի փողոցից բերման ենթարկելու մասին է: Նրան այնուհետ բաց թողեցին, սակայն այս դեպքը ստացավ հանրային հնչեղություն՝ բարձրաձայնվելով նաև միջազգային որոշ պարբերականների կողմից: Այսպիսով՝ մի կողմից կարելի է արձանագրել սփյուռքահայ, ՀՀ քաղաքացի չհանդիսացող և հանրային անձի մասնակցությունը ներհայաստանյան բողոքի ակցիայի, մյուս կողմից՝ այդ ոչ առօրեական մասնակցության դեմ ոստիկանության կողմից առօրեական գործելաոճի դրսևորումը՝ առանց հիմնավորման բերման ենթարկելու տեսքով: Արսինե Խանջյանի նկատմամբ հատուկ վերաբերմունքը շարունակվեց նաև հետագայում, երբ 2017 թ. ապրիլի խորհրդարանական ընտրություններից առաջ բարձրաձայնելով դիտորդ լինելու իր ցանկության մասին՝ Արսինեն հարձակման ենթարկվեց կանացի մարմնի մերկության մեղադրանքների միջոցով:

- «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ների միության ծրագրերի համակարգող, հրապարակախոս Զարուհի Հովհաննիսյանը 2016 թ. նոյեմբերի 26-ին իր ֆեյսբուքյան էջում գրել էր, որ ժամը 16:00-ի սահմաններում Տերյան փողոցում ուղիղ երթևեկելի հատվածում մի տղամարդ անմարդկային ծեծի է ենթարկում երիտասարդ մի կնոջ՝ ձեռքերով և ոտքերով հարվածներ հասցնելով մարմնի տարբեր հատվածներին, մազերից բռնած՝ քարշ տալիս ասֆալտին: Զարուհի Հովհաննիսյանի միջամտությամբ կնոջը հաջողվում է խուսափել հանրությանը «Ջունգլ» մականունով հայտնի ամուսնու կողմից առավել լուրջ վնասվածքներ ստանալուց: Վերջինս սկսել է բղավելով պահանջել, որ ոչ ոք չմիջամտի, քանի որ նա իր կինն է, և դիմել է նաև Զ. Հովհաննիսյանի ամուսնուն. «էս քո կնիկն է, ասա թող թողի գնա, խի՞ կնիկդ քեզ չի ենթարկվում», ինչին ի պատասխան հնչել էր հետևյալ արտահայտությունը՝ «Իսկ ինչի՞ պիտի ենթարկվի»: Զարուհին այնուհետ այս թեմայով սպառնալիքներ էր ստացել, որ պետք է զբաղվի իր ընտանեկան խնդիրների կարգավորմամբ, ոչ թե քանդի ուրիշների ընտանիքը: Թե՛ Ջունգլի կինը, թե՛ Զարուհին դիմել էին իրավապահ մարմիններին:
- 2016-ի ընթացքում «Հյուման Ռայթս Հաուս Երևան» իրավապաշտպան կազմակերպությունների միավորման անդամները և մի շարք այլ իրավապաշտպան կառույցներ ու անձինք հայտարարություն տարածեցին այն մասին, որ «Վելես» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Մարինա Պողոսյանի դեմ քրեական հետապնդում է իրականացվում, որի դատական գործընթացը պատրաստվում են հանրային մոնիթորինգի ենթարկել: Այդուհանդերձ, 2016-ին մեկնարկած դատավարության և տարվա ընթացքում դրան առնչվող նախընթաց այլ գործողությունները խիստ հազվադեպ և հատվածական էին լուսաբանվում առցանց մեդիադաշտում:

Նման իրավիճակների հազվադեպ լուսաբանումը թիրախավորված անձանց խոցելիության մեկ այլ կողմի դրսևորում է, ըստ որի նույնիսկ խնդիրների առկայության պարագայում դրանց բարձրաձայնումը և հրապարակայնացումը խնդրահարույց են: Սա խնդրի կրողին թողնում է մենակ այն խոչընդոտների և արգելքների հետ, որոնց տվյալ մարդը բախվում է հանրային նշանակության գործունեություն իրականացնելիս: Այսպիսով՝ ստեղծվում է հարակարծիք մի իրավիճակ, երբ հանրային շահի պաշտպանությունը հռչակող անձը մնում է միայնակ՝ դեմ հանդիման

այն խնդիրներին, որոնք առաջ են գալիս հանրային կարևորության հարցեր առաջ քաշելու և ծևակերպելու հետևանքով: Հանրության այլ անդամների իրավունքների պաշտպանությունը կոնկրետ անհատի կողմից ոչ միայն առաջ չի բերում հանրության այդ անդամների կողմից տվյալ անձի պաշտպանության փորձ, այլև նշանակում է տվյալ անձի հավելյալ մարգինալացում լայն հանրության շրջանում: Բացի այդ՝ վերոթվարկյալ դեպքերը ի ցույց են դնում իրական կնոջ կերպարի և նրա հասարակական ակտիվության՝ անհարիր հռչակվող բնույթը: Ըստ այդմ, իրական կինը կարիք չունի դուրս գալու փողոց և խոսելու հանրային ու քաղաքական խնդիրների շուրջ, նրա տեղը ընտանիքն է: Եթե կինը փողոցում է, ուրեմն կայացած չէ որպես կին, ունի որոշակի չբավարարվածության և գուցե նաև հոգեկան առողջության խնդիրներ: Այս հավելյալ պիտակավորումները կոչված են մարգինալացնելու կին իրավապաշտպան-ակտիվիստներին՝ արժեզրկելով այն հանրային իմաստը, որ կոչված են ունենալ վերջիններիս ակցիաները, գործողությունները, նախաձեռնությունները: Ուստի կարող ենք առաջ քաշել այն վարկածը, որ կին ակտիվիստների և իրավապաշտպանների պարագայում մեդիալուսաբանման հետևանքով վերջիններիս խոցե-լիությունը աճում է զգալիորեն ավելի շատ, քան դա տեղի է ունենում մեդիայի կողմից թիրախավորված տղամարդ իրավապաշտպան-ակտիվիստների հետ:

# Գլուխ 2

## Հայաստանյան առցանց մեդիադաշտի նկարագիրը 2016-ին

2015 թ. հրապարակելով իրավապաշտպանների և ակտիվիստների վերաբերյալ մեդիալուսաբանման ուսումնասիրության արդյունքները՝ «Սոցիոսկոպ»-ն արդեն իսկ մանրամասն նկարագրել էր հայաստանյան մեդիադաշտը[1]: Այդուհանդերձ, հարկ ենք համարում այստեղ ներկայացնել այն հիմնական դրվագները, որոնք բնութագրական են 2016-ի համատեքստի համար: Առաջինը, ինչ կառանձնացնենք, իրավունքների խախտման տեսանկյունից հենց լրագրողների թիրախավորումն էր: Մասնավորապես, «2016 թ.-ին արձանագրվել է լրագրողների աշխատանքը խոչընդոտելու 30 դեպք (17 դեպք 2015 թ.-ին), որոնք ուղեկցվում էին մասնավորապես նրանց նկատմամբ բռնություն կիրառելով, հրելով, հայհոյելով, նկարահանող սարքերը խլելով և վնասելով[2]»:

Ընդ որում, լրագրողների իրավունքները խախտվել են նաև այլ կառույցների/անձանց կողմից: Մասնավորապես, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն արձանագրել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 10 դեպք,

---

[1] *Մանրամասները տե՛ս http://socioscope.am/wp-content/uploads/2016/02/Media_Tolerance_Index.pdf:*

[2] *Տե՛ս «Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի մասին տարեկան հաշվետվություն (ՉԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)»: Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ: (2017): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է www.hcav.am կայքում:*

որոնցում տուժել է 26 լրագրող և օպերատոր: Բացի այդ՝ կազմակերպությունն արձանագրել է ԶԼՄ-ների և դրանց աշխատակիցների նկատմամբ տարաբնույթ ճնշումների 52 փաստ, ինչպես նաև տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքի խախտումների 30 փաստ[3]:

Այս առնչությամբ ուշագրավ է թվում լրագրող Սիրանույշ Պապյանի նկատմամբ ՀՀ գլխավոր ոստիկանապետի պաշտոնը զբաղեցնող անձի կողմից թույլ տված վիրավորանքը՝ հաշվի առնելով կին ակտիվիստների և իրավապաշտպանների առնչությամբ նախորդ գլխում նկարագրած իրավիճակը: Մասնավորապես, ինչպես նշված է լրագրողական մի շարք կազմակերպությունների տարածած հայտարարության մեջ. «Ապրիլի 22-ին Երևանի Բաղրամյան պողոտայում ոստիկանները կրկին բռնություն են կիրառել ու խոչընդոտել ԶԼՄ ներկայացուցիչների օրինական մասնագիտական գործունեությունը: Այս անգամ թիրախ են դարձել 1in.am լրատվական կայքի օպերատորներ Նարեկ Բարսեղյանը և Սևակ Սողոմոնյանը, որոնք լուսաբանում էին «Մենք ենք տերը մեր երկրի» քաղաքացիական նախաձեռնության երթը դեպի նախագահական նստավայր: Հարձակման հետևանքով վնասվել են 1in.am-ի նկարահանող տեսախցիկը, ուղիղ եթեր ապահովող սարքը, ինչպես նաև խմբագրությանը պատկանող հեռախոսը: Իսկ օպերատորներին բիրտ ուժի գործադրմամբ նստեցրել են ոստիկանական մեքենա՝ սահմանափակելով տեղաշարժը և խոչընդոտելով նրանց գործունեությունը: Այս ամենից 1in.am-ի աշխատակիցներին չի պաշտպանել նույնիսկ ներկայանալն ու խմբագրության վկայականը ցույց տալը: Ապրիլի 24-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում լրագրողները ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանից պարզաբանումներ պահանջեցին վերոհիշյալ դեպքերի վերաբերյալ՝ նշելով, որ ոստիկանությունն իր ձեռագիրը չի փոխում: Ոստիկանապետը նախ հակադարձեց. «Դուք դեղնում եք, գունաթափվում եք…», ապա 1in.am-ի թղթակից Սիրանույշ Պապյանի դիտարկմանը, թե մենք չենք տեսնում ձեր բարեփոխումները, արձագանքեց բարձրաստիճան պաշտոնյային անհարիր խոսքերով. «Ես էլ քո մեջ կին չեմ տեսնում…»[4]»:

[3] *Տե՛ս «Մարդու իրավունքները Հայաստանում-2016»: (01.02.2017): 2017.02.01-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.lragir.am/index/arm/0/right/view/147087:*

[4] *Տե՛ս Հայտարարություն 1-in.am-ի ներկայացուցիչների նկատմամբ բռնի գործողությունների և լրագրողի հասցեին ՀՀ ոստիկանապետի վիրավորական արտահայտության վերաբերյալ: (25.04.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է http://ypc.am կայքում:*

Հայտարարությունը ստորագրած կազմակերպությունները դիմել էին ոստիկանապետին՝ Ս. Պապյանից հրապարակային ներողություն խնդրելու հորդորով: Ս. Պապյանը հայց ներկայացրեց ընդդեմ ոստիկանապետի, ինչի հիման վրա հարուցվեց դատական վարույթ: Դատական նիստերը սակայն դեռևս ընթացքում են, ոստիկանությունը դատարանի՝ հաշտության գնալու առաջարկին արձագանքել է, թե հաշտվելու նպատակ չեն հետապնդում[5]:

Եթե դիտարկենք մամուլի ազատության միջազգայնորեն համադրելի ցուցանիշները, ապա Freedom House կազմակերպության 2016 թ. արդյունքներով հայաստանյան մամուլը դասակարգվել է իբրև ոչ ազատ՝ ստանալով 63 միավոր վատագույն հնարավոր 100-ից: Այս հանրագումարը գոյացել է մամուլի գործառության իրավական դաշտի գնահատականից՝ վատթարագույն հնարավոր 30-ից 20 (նախորդ տարվա համար գրանցված է հետընթաց մեկ միավորով), քաղաքական համատեքստը՝ վատթարագույն հնարավոր 40-ից 23 (նախորդ տարվա համար գրանցված է հետընթաց մեկ միավորով) և մամուլի գործառության տնտեսական իրադրությունը՝ վատթարագույն հնարավոր 30-ից 20[6]:

Լրատվադաշտի քաղաքական կախվածության կարևոր խնդիրներից մեկն էլ դիտարկվում էր հեռուստաալիքների թվի սահմանափակումը և այդպիսով, հեռուստատեսային հեռարձակման վերահսկումը: Այս խնդիրների կարգավորման միջոց դիտարկվող թվային հեռարձակմանն անցումը ավարտվեց 2016 թ., մասնավորապես, 2016 թ. հոկտեմբերի 26-ին Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանցի պաշտոնական կայքէջում տեղադրվեց հաղորդագրություն առ այն, որ «հանրապետության տարածքում անալոգային հեռուստատեսային հեռարձակման անջատման աշխատանքները ս.թ. հոկտեմբերի 26-ի դրությամբ ամբողջությամբ ավարտվել են»[7]:

Ինչ վերաբերում է առցանց լրատվադաշտին, ապա այն, նույն Freedom House կազմակերպության զեկույցի համաձայն, առավել ազատ է, քան ավանդական

---

[5] *Տե՛ս Խճճելու եմ, չեմ թողնելու, դուք չեք հիմնավորելու ձեր հայցը. ՀՀ ոստիկանապետի ներկայացուցիչը՝ լրագրողի պաշտպանին: (08.11.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://news.am/arm/news/356110.html:*

[6] *Տե՛ս Armenia. Freedom of the Press 2016: 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://freedomhouse.org/report/freedom-press/2016/armenia:*

[7] *Տե՛ս Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց ՓԲԸ-ի պաշտոնական կայքը՝ http://tna.am/:*

մեդիան: Համացանցում ազատության ցուցանիշով այս կազմակերպությունը Հայաստանին դասել է ազատ երկրների շարքին[8]: Այդուհանդերձ, զեկույցում ամրագրված է հուլիսյան իրադարձությունների ժամանակ Ֆեյսբուք ցանցի մասնակի արգելափակման, ապրիլյան դեպքերի մեկնաբանման ընթացքում ինքնագրաքննության խրախուսման, ինչպես նաև մի շարք այլ խնդիրների մասին, որոնք հանրագումարում բերել են նրան, որ չնայած այս ցուցանիշով Հայաստանի գնահատականը չի փոխվել, սակայն նվազել է նախորդ տարիների համեմատ:

Միաժամանակ ուշագրավ տեղեկություններ են պարունակվում ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի՝ 2016 թ. ընդունած որոշումներում[9]: Ըստ այդմ, 2016-ին Դիտորդ մարմինն ընդունել է վեց որոշում՝ ԶԼՄ-ների գործունեության հետ կապված տարաբնույթ իրավիճակներում, որոնցից երկուսի պարագայում է, որ թիրախային ԶԼՄ-ները որոշ քայլեր են ձեռնարկել՝ դիտորդ մարմնի առաջարկությունների և բարձրացրած մտահոգությունների ուղղությամբ: Բացի այդ՝ 13 դեպքի առնչությամբ տարվա ընթացքում Երևանի մամուլի ակումբի և գործընկեր կազմակերպությունների կողմից ընդունվել են հայտարարություններ[10]: Նշված հայտարարություններից չորսը այս կամ այն կերպ առնչվում են «Սասնա ծռեր»-ի զինյալ խմբի կողմից իրականացված գործողության և դրան հաջորդած իրադարձությունների ընթացքում լրագրողական գործունեության համար առաջացած խոչընդոտներին: Հայտարարությունների մեջ զգալի են նաև տարբեր պաշտոնատար/հրապարակային անձանց կողմից լրագրողների մասնագիտական գործունեության խոչընդոտման/լրագրողին վիրավորելու դեպքերի առնչությամբ արտահայտած մտահոգությունները: Այսպիսով՝ հայտարարությունների ընդունումը գործում է հիմնականում իբրև լրագրական դաշտի քաղաքական գործիք՝ պաշտպանելու լրագրողական մասնագիտությունների ներկայացուցիչներին արտաքին խոչընդոտներից/ոտնձգություններից, իսկ ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի որոշումներն ու եզրակացությունները բացահայտում են հենց լրագրության դաշտում առկա

---

[8] *Տե՛ս Armenia. Freedom of the Net 2016: 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://freedomhouse.org/report/freedom-net/2016/armenia:*

[9] *Տե՛ս 2016 թ. Որոշումներ/եզրակացություններ: ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմին: 2017.01.31-ի դրությամբ հասանելի է http://ypc.am կայքում:*

[10] *Տե՛ս Երևանի մամուլի ակումբի և գործընկեր կազմակերպությունների հայտարարությունները: 2017.01.31-ի դրությամբ հասանելի է http://ypc.am կայքում*

խնդիրները: Մասնավորապես, այս հետազոտության տեսանկյունից ուշագրավ է, որ ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի՝ 2016 թ. ընդունված որոշումներում քննարկվող բոլոր դեպքերն էլ առնչվում են լրագրողների և լրատվամիջոցների կողմից «Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» 4-րդ՝ «Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ» բաժնի դրույթների չպահպանմանը: Հաշվի առնելով ընդունված որոշումների թիվը (ընդամենը վեցը ողջ տարվա ընթացքում), ինչպես նաև դրանց հիման վրա թիրախային լրատվամիջոցների/լրագրողների կողմից քայլերի ձեռնարկման հաճախականությունը (վերոնշյալ վեցից երկուսը)՝ կարող ենք փաստել, որ չնայած այն կարևորությանը, որ կրում է ցանկացած ոլորտի ինքնակարգավորման և որակի ներքին վերահսկողության նման մեխանիզմը, դրա կիրառությունն ու նշանակությունը հայաստանյան լրագրողական դաշտի համար մնում է սակավադեպ և թերարժեք:

Եթե սրան գումարենք նաև այն հանգամանքը, որ, ինչպես ցույց էին տվել նախորդ տարվա ուսումնասիրության արդյունքները, իրավապաշտպանների և ակտիվիստների մեդիալուսաբանումը կրում է խիստ իրադարձային և ոչ հետևողական բնույթ, ապա ակնհայտ է, որ այս թիրախային խմբերի գործունեությունն ու դրա լուսաբանումը տեղի են ունենում մի իրավիճակում և ձևով, որը մեծամասամբ նպաստում է վերջիններիս խոցելիության մեծացմանը:

Ի վերջո, լսելի՞ են իրականում իրավապաշտպաններն ու ակտիվիստները, եթե վերջիններիս հարցերը լուսաբանվում են առավելապես այն լրատվամիջոցների կողմից, որոնց լսարանն ինքնին առավել սահմանափակ է՝ ի համեմատ ցանկում ընդգրկված մյուս լրատվամիջոցների: Այսպիսով, երբ խոսում ենք իրավապաշտպանների և ակտիվիստների գործունեության լուսաբանման մասին, խոսում ենք որոշակի փակ շրջանակի մասին, երբ առավել հանգամանալից լուսաբանումը տեղի է ունենում մեծամասամբ այն հանրույթում, որը թե՛ թիրախն է, թե՛ հիմնական ունկնդիրն ու ընթերցողը, թե՛ ակտորը: Սա ապահովում է իրավապաշտպանների և ակտիվիստների լրացուցիչ մարգինալացումը, լուսանցքային ընկալումը մեյնսթրիմային լրատվամիջոցների կողմից:

# Գլուխ 3

## Իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիությունը հայաստանյան առցանց մեդիադաշտում. մեդիամոնիտորինգի տվյալներ

Այսպիսով՝ հաշվետու ժամանակաշրջանում դիտարկվել են հետևյալ տասը լրատվամիջոցները.

- Armtimes.com
- Aravot.am
- Iravunk.am
- Epress.am
- Tert.am
- Azatutyun.am
- News.am
- Lragir.am
- A1plus.am
- 1in.am

Կոդավորվել են այդ լրատվամիջոցների՝ հետևյալ չորս դեպքերին վերաբերող հրապարակումները.

- Գևորգ Սաֆարյանի ձերբակալության և գործի հետագա ընթացքին վերաբերող հրապարակումները,
- Վարդգես Գասպարիի ձերբակալության և գործի հետագա ընթացքին վերաբերող հրապարակումները,
- Ժիրայր Սեֆիլյանի ձերբակալության և գործի հետագա ընթացքին վերաբերող հրապարակումները,
- «Սասնա ծռեր»-ի կողմից ՊՊԾ գնդի գրավման շրջանակ-

ներում մի շարք հանրային ակցիաների, հավաքների, երթերի ընթացքում ոստիկանության կողմից ինչպես խաղաղ հավաքների, ակցիաների անցկացման իրավունքի ոտնահարման, այնպես էլ որոշ ակտիվիստների, իրավապաշտպանների առանձնակի թիրախավորման առնչությամբ հրապարակումները:

Տասը լրատվամիջոցներում վերոնշյալ չորս դեպքերի առնչությամբ եղել է ընդամենը 3007 հոդված, որոնք բաշխված են խիստ անհամաչափ: Այսպես, հրապարակումների 71.7 տոկոսը վերաբերել է «Սասնա ծռեր»-ի կողմից իրականացված գործողության շրջանակներում իրավունքի ոտնահարման դեպքերին, այնուհետև 13.3 տոկոսը անդրադառնում է Գևորգ Սաֆարյանի շուրջ ծավալված իրադարձություններին: Վարդգես Գասպարիին և Ժիրայր Սեֆիլյանին անդրադարձը համամասնաբար կազմում է 8.9 և 6.1 %: Ընդ որում, այս միտումը բնորոշ է բոլոր լրատվամիջոցներին: Իրավիճակը փոքր-ինչ տարբեր է հետևյալ լրատվամիջոցների պարագայում.

- Iravunk.am-ը դիտարկվել է փետրվար ամսի կեսերից՝ պայմանավորված կայքի՝ տեխնիկական անհասանելիությամբ (այնուհետ կայքը ներկայացավ վերափոխված տարբերակով): Այսպիսով՝ iravunk.am-ը չի ընդգրկվել միայն Գևորգ Սաֆարյանի դեպքի շուրջ մեդիալուսաբանման ուսումնասիրության շրջանակներում, այդուհանդերձ, մնացած դեպքերից անդրադարձ կատարել է միայն «Սասնա ծռեր»-ի շուրջ ծավալված համապատասխան իրադարձություններին, մյուս թեմաներով անդրադարձ չի եղել:
- 1in.am-ի պարագայում «Սասնա ծռեր»-ի շուրջ ծավալված իրադարձությունների անդրադարձը չի դիտարկվել, քանի որ 2016 թ. հուլիսի 10-ին այս լրատվամիջոցը հայտարարեց, որ դադարեցնում է աշխատանքը: Ուստի 2016 թ. հուլիսի 17-ին վերջինիս աշխատանքը դադարեցված էր և վերսկսվեց միայն հուլիսի 21-ին: Հաշվի առնելով, որ այսպիսով 1in.am-ը և մյուս ինը լրատվամիջոցները չեն կարող մոնիտորինգի ենթարկվել ժամանակային նույնական կտրվածքի համար՝ 1in.am-ի՝ այս դեպքին վերաբերող հրապարակումները չեն կոդավորվել:
- Epress.am-ը, ինչպես նախորդ տարվա մոնիտորինգի արդյունքներն էին ցույց տվել, առավել հետևողական էր լուսաբանելու նաև այն իրադարձությունները, որոնք առնչվում էին իրավապաշտպանների և ակտիվիստների

գործունեությանը, սակայն չէին ստանում հանրային լայն հնչեղություն: 2016-ին դիտարկված չորս դեպքերի լուսաբանման համամասնությունը հաստատում է այս օրինաչափությունը: Մասնավորապես, ի համեմատ չորս դեպքերի լուսաբանման ընդհանուր համամասնության, որ բնորոշ էր մյուս լրատվամիջոցներին, epress.am-ը առավել հաճախակի է լուսաբանել նաև մյուս երեք դեպքերը՝ 62.9 տոկոս՝ «Սասնա ծռեր», 22.6 տոկոս՝ Վարդգես Գասպարի, 10.7 տոկոս՝ Գևորգ Սաֆարյան և 3.8 տոկոս՝ Ժիրայր Սեֆիլյան:

## Գևորգ Սաֆարյանի ձերբակալությունը և հետագա ընթացքի լուսաբանումը. խոցելիության ինդեքսը առցանց լրատվադաշտում[1]

### ԴԵՊՔԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱԴԱՇՏՈՒՄ

Դեպքի առնչությամբ ինը լրատվամիջոցներում եղել է ընդհանուր առմամբ 400 հրապարակում, որոնց բաշխումը տարբեր է: Ընդ որում, եթե կան լրատվամիջոցներ, որոնցում հրապարակումների համեմատաբար փոքր համամասնությունը կապված է դրանց՝ նվազ հաճախականությամբ թարմացվելու հետ, ինչպես epress.am - 17 հոդված, ապա այնպիսի լրատվամիջոցի պարագայում, ինչպիսին tert.am-ն է, որն իրեն դիրքավորում է իբրև օպերատիվ և անընդհատ թարմացվող լրահոսով առցանց լրատվամիջոց, թեմայի վերաբերյալ առկա է ընդամենը 14 հոդված: Այս առանձնահատկությունը ի հայտ էր բերվել դեռևս անցյալ տարվա մոնիտորինգի արդյունքներով՝ անվանելով զգուշավոր լռության ռազմավարություն լրատվամիջոցի կողմից՝ իրավապաշտպաններին և ակտիվիստներին վերաբերող դեպքերի լուսաբանման տեսանկյունից: Ուսումնասիրված ինը լրատվամիջոցների դեպքում էլ հրապարակումների ճնշող մեծամասնությունը հիմնված է սեփական լրատվության վրա՝ 97.8 %: Դեպքին առնչվող հրապարակումներից 93.5 %-ի պարագայում

[1] *Քանի որ iravunk.am-ը հունվար, փետրվար ամիսներին չի գործել, հետևաբար վերջինիս համար տվյալ դեպքով խոցելիության ինդեքսը չի հաշվարկվել:*

հոդվածն ունի զուտ նկարագրողական բնույթ: Հրապարակումներից 77.3 %-ի պարագայում տեքստին կից տեսանյութ չկա: Եղած տեսանյութերի դեպքում էլ ամենահաճախը հանդիպում է այն տարբերակը, երբ տեքստն ըստ էության տեսանյութի սղագրությունն է: Տեքստը տեղեկատվության փոխանցման որ հիմնական միջոցն է հրապարակումներից 6.8 %-ի պարագայում: Եվս 3 տոկոսի պարագայում չնայած տեսանյութ կա, սակայն հիմնական միտքը փոխանցվում է տեքստի միջոցով: Այդուհանդերձ, իրավիճակը մի փոքր տարբեր է որոշ լրատվամիջոցների պարագայում: Մասնավորապես, azatutyun.am-ի պարագայում հրապարակումների 41.3 %-ն է, որ չի ուղեկցվում տեսանյութով: Սակայն միևնույն ժամանակ դեպքերից 54.3 %-ի պարագայում հրապարակման տեքստը տեսանյութի սղագրությունն է: Տեսանյութերով ուղեկցվող հրապարակումների թիվը համեմատաբար մեծ է նաև a1plus.am և 1in.am կայքերի դեպքում՝ 43.1% և 28.9% համապատասխանաբար: Հատկանշական է նաև, որ տեքստում և տեսանյութում արտահայտվող դիրքորոշումները ճնշող մեծամասնությամբ համընկնում են: Գրանցված են տեսանյութի և տեքստի՝ հակասական դիրքորոշում արտահայտելու եզակի դեպքեր aravot.am և azatutyun.am լրատվամիջոցներում: Միաժամանակ, հրապարակումների ընդամենը 2%-ն է, որ կից պատկեր չի պարունակում: Ուշագրավ է, որ առկա պատկերներից 53.8 %-ի պարագայում հրապարակման հետ տրվող նկարում պատկերված են լինում թիրախավորված ակտորը կամ վերջինիս աջակիցները, 29.3 %-ի պարագայում թիրախավորման դեպքը փաստող կամ դեպքի հետ անմիջական առնչվող լուսանկար է: Թիրախավորման բացահայտ կամ լատենտ կողմնակցի լուսանկար են հրապարակել ընդամենը երեք լրատվամիջոց՝ armtimes.com (1 դեպք), azatutyun.am (2 դեպք), news.am (1 դեպք): Հրապարակումներից 71%-ի պարագայում հեղինակ նշված չէ: Այս առումով կան լրատվամիջոցներ, որոնք ընդհանրապես հեղինակին նշելու պրակտիկա չեն դրսևորել՝ news.am, epress.am, tert.am: Որոշ լրատվամիջոցներ առավել հակված են նշելու հեղինակին՝ azatutyun.am, aravot.am, armtimes.com:

*Գևորգ Սաֆարյանի առցանց լուսաբանում*




- **Armtimes.com** - լրատվամիջոցի կողմից այս դեպքի շրջանակներում հրապարակված 56 հոդվածներից **35.7 %-ում** ներկայացված է հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տեսակետը՝ կա՛մ որպես միակը, կա՛մ որպես գերակշռողը:
- **Aravot.am** - թեմային անդրադարձել է ընդհանուր առմամբ 67 հրապարակմամբ, որոնցից **31.3 %-ի** դեպքում ներկայացված է հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տեսակետը՝ կա՛մ որպես միակը, կա՛մ որպես գերակշռողը:
- **News.am** - ընդհանուր հոդվածների թիվը 76 է, որոնցում հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տեսակետը որպես միակը կամ գերակշռողը ներկայացնող հրապարակումները կազմում են **30.3 %**:
- **A1plus.am** - 51 հոդվածներից **29.4 %-ը** հովանավորչական և կամ նպատակաուղղված խոցելիության տրամաբանության մեջ են:
- **Azatutyun.am** - դեպքին առնչվող 46 հոդվածներից **28.3 %-ը** ներկայացված է հովանավորչական և կամ նպատակաուղղված խոցելիության տրամաբանության մեջ:
- **Tert.am-ի** 14 հոդվածի պարագայում հովանավորչական և կամ նպատակաուղղված խոցելիությամբ դիրքավորման շրջանակներում տրված հրապարակումների տոկոսը կազմում է **21.4**:
- **Epress.am** - այս դեպքում 17 հոդվածների համար ցուցանիշը կազմում է **17.6 %**:

- **1in.am** - 45 հոդվածներից ընդամենը **4.4 %-ի** դեպքում է նյութը ներկայացրել հովանավորչական և կամ նպատակաուղղված խոցելիության տեսանկյունից:
- **Lragir.am** - 28 հոդվածների համար ցուցանիշը **3.6% է**:

Ուշագրավ է, որ չնայած սրան՝ լրատվամիջոցի սեփական դիրքորոշման արտահայտումը շատ ավելի հազվադեպ է. ընդհանուր առմամբ ինը լրատվամիջոցների համար սեփական դիրքորոշման դրսևորում չկա դեպքին առնչվող հոդվածներից 93.5 %-ում: Ընդ որում, a1plus.am, tert.am և azatutyun.am լրատվամիջոցներն ընդհանրապես սեփական դիրքորոշում չեն արտահայտել: Epress.am (17.6%), lragir.am (14.3%) և 1in.am (20%) կայքերը սեփական դիրքորոշումը դրսևորել են միայն խոցելիության հաղթահարման տրամաբանության մեջ՝ դրանով հավելյալ ամրագրելով իրենց դիրքը իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիության ինդեքսի ներքին հորիզոնականներում՝ Գևորգ Սաֆարյանին առնչվող դեպքի լուսաբանման շրջանակներում: Լրատվամիջոցների շարքում առանձնանում է նաև armtimes.com-ը, որը սեփական դիրքորոշման արտահայտման դեպքերից և ոչ մեկում խոցելիության հաղթահարման դիրքորոշում չի ցուցաբերել, այնինչ հոդվածներից 7.1%-ը դիրքավորել է որպես նպատակաուղղված խոցելիության ցուցաբերում լուսաբանման թիրախ հանդիսացած անձի նկատմամբ:

Եթե անդրադառնանք վերնագրերին, ապա կնկատենք, որ ռազմավարությունները տարբեր են: Ընդհանուր առմամբ կարող ենք փաստել, որ գրեթե բոլոր լրատվամիջոցները վերնագրերում, որոնք ծառայում են որպես լսարանն ընդլայնելու հիմնական միջոցներից մեկը, խոցելիության մատնանշումը դիտում են իբրև դրա արդյունավետ մեխանիզմ: Սա է պատճառը, որ եթե դիտարկենք դեպքին առնչվող այն հրապարակումների թիվը, որոնցում խոցելիության մատնանշում չկա, ապա դրանք կկազմեն ավելի մեծ թիվ, քան այն վերնագրերը, որոնցում չի մատնանշվել խոցելիության փաստը: Սա նշանակում է, որ նույնիսկ եթե հրապարակման մեջ խոցելիության մասին խոսք չկա, լրատվամիջոցները նախընտրում են վերնագրում փաստել այդ խոցելիությունը: Այս մոտեցումը ամենավառը արտահայտված է lragir.am-ում, որը թեև դեպքին առնչվող հոդվածների 71.4 %-ի պարագայում խոցելիություն չի մատնանշել, սակայն վերնագրերի

պարագայում այս ցուցանիշը 21.4% է: Նույն ցուցանիշը 1in.am-ի պարագայում համապատասխանաբար 66.7% է և 35.6 %: Տարբերությունը զգալի է նաև tert.am-ի պարագայում՝ 35.7 և 14.3 % համապատասխանաբար: Միակ լրատվամիջոցը, որը վերնագրերում շատ ավելի չեզոք է, քան ներկայացված հրապարակումներում, a1plus.am-ն է. 23.5 և 39.2 % համապատասխանաբար: Այդուհանդերձ, լրատվամիջոցները վերնագրում առավելապես մատնանշում են խոցելիությունը՝ առանց դիրքորոշման բացահայտման՝ շուրջ 48.3 %: Խոցելիության մասով դիրքորոշման ներկայացումը վերնագրում նվազ հաճախ է հանդիպում: Երկու լրատվամիջոց՝ epress.am-ն ու tert.am-ը, վերնագրում դիրքորոշում դրսևորելիս ցուցաբերել են բացառապես խոցելիության հաղթահարմանն ուղղված դիրքորոշում: Նպատակաուղղված խոցելիության դրսևորումը վերնագրերում զգալի է azatutyun.am-ի պարագայում՝ 13%, aravot.am-ի պարագայում՝ 7.5% և armtimes.com-ի դեպքում՝ 8.9 %:

Ընդհանուր առմամբ հրապարակումներից 59.5 %-ի պարագայում աջակցություն է հայտնվում թիրախավորված անձին, շարժմանը, գաղափարին և/կամ կառույցին: Սրա զգալի մասի պարագայում՝ 59 %-ի դեպքում, այդ աջակցությունը հայտնվում է այլ ակտորների միջոցով: Ընդամենը 0.5 % դեպքերում է այդ աջակցությունը հայտնվում լրատվամիջոցի կողմից: Ըստ լրատվամիջոցների՝ իրավիճակն այստեղ կարելի է բնութագրել այսպես.

- Լրատվամիջոցի կողմից աջակցության դրսևորում առկա է միայն երկու լրատվամիջոցների պարագայում՝ aravot.am և azatutyun.am:
- Այլ ակտորների կողմից աջակցության ցուցաբերման դեպքերն առավել հաճախ են azatutyun.am-ի դեպքում (78.3%) և Iragir.am-ի դեպքում (71.4%):
- Այլ ակտորների կողմից աջակցության ցուցաբերումը նվազ է արտահայտված epress.am-ի (41.2%) և tert.am-ի (35.7%) դեպքում:

Յոդվածներից շուրջ 74%-ի պարագայում բացակայում է թիրախավորված անձի խոսքը: Ընդ որում, թիրախավորված անձի խոսքը հոդվածներում դիտարկվել է թե՛ վերջինիս խոսքի ուղղակի ներկայացման, թե՛ այլ ակտորների կողմից մեջբերումների, թե՛ հիշեցման կարգով տրվող մեջբերումների տեսքով, սակայն դրանց հանրագումարն այսպիսով ավելի քիչ մաս է կազմում, քան այն նյութերը, որոնցում թիրախավորված անձը ներկայացվում է, սակայն

«չի խոսում»:

Այդուհանդերձ լրատվամիջոցները առավել հակված են խոսք տալ թիրախավորված անձի պաշտպանին՝ 61%: Այստեղ առանձնանում են Iragir.am-ն ու 1in.am-ը, որտեղ այդ ցուցանիշը համապատասխանաբար 14.3% է և 33.3%: Ըստ հանդես գալու հաճախականության՝ մյուս խոսող ակտորը որպես կանոն չեզոք կողմ է՝ 16%: 3,.5% դեպքերում խոսում է թիրախավորման լատենտ կամ բացահայտ կողմնակիցը: Ընդ որում, Iragir.am-ում այս ցուցանիշը 10.7 % է:

## Վարդգես Գասպարիի ձերբակալության և գործի հետագա ընթացքի լուսաբանումը. խոցելիության ինդեքսը առցանց լրատվադաշտում[2]

### ԴԵՊՔԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՌՑԱՆՑ ԼՐԱՏՎԱԴԱՇՏՈՒՄ

Դեպքի մասով հրապարակումների թիվն ավելի փոքր է, քան Գևորգ Սաֆարյանի պարագայում՝ 268 հոդված: Սակայն հրապարակումների թիվը, ըստ լրատվամիջոցների, ցույց է տալիս, որ լրատվամիջոցները տարբեր հաճախականությամբ են լուսաբանել այս երկու դեպքերը.

*Գևորգ Սաֆարյան*




[2] *Քանի որ iravunk.am-ը այս դեպքի առնչությամբ լուսաբանում չի իրականացրել, հետևաբար վերջինիս համար տվյալ դեպքով խոցելիության ինդեքսը չի հաշվարկվել:*




- Որոշ լրատվամիջոցներ լուսաբանումը իրականացրել են առավել հավասար հաճախականությամբ, ինչպես՝ armtimes.com (Գևորգ Սաֆարյան - 56, Վարդգես Գասպարի - 50), aravot.am (Գևորգ Սաֆարյան - 67, Վարդգես Գասպարի - 63):
- Որոշ լրատվամիջոցներ ավելի մեծ հետաքրքրություն են ցուցաբերել Վարդգես Գասպարիին առնչվող թեման լուսաբանելիս՝epress.am (Գևորգ Սաֆարյան - 17, Վարդգես Գասպարի - 36), tert.am (Գևորգ Սաֆարյան - 14, Վարդգես Գասպարի - 24):
- Մյուս լրատվամիջոցներում կա հստակ անկում՝ azatutyun.am (Գևորգ Սաֆարյան - 46, Վարդգես Գասպարի - 17), News.am (Գևորգ Սաֆարյան - 76, Վարդգես Գասպարի - 22), lragir.am (Գևորգ Սաֆարյան - 28, Վարդգես Գասպարի -11), 1in.am (Գևորգ Սաֆարյան - 45, Վարդգես Գասպարի - 16), a1plus.am (Գևորգ Սաֆարյան - 51, Վարդգես Գասպարի - 29):

Գերակշիռ մեծամասնությամբ՝ 95.5 %, լրատվամիջոցները հրապարակումներում օգտագործում են սեփական լրատվությունը: Նմանատիպ օրինաչափություն է արձանագրվում հոդվածների ոճում՝ 97.4% դեպքերում դրանք նկարագրողական հոդվածներ են: Հոդվածներից 76.1%-ի պարագայում կից տեսանյութ չկա: Այդուհանդերձ, իրավիճակը, ինչպես և Գևորգ Սաֆարյանի պարագայում, տարբերվում է ըստ լրատվամիջոցների: Azatutyun.

am-ի պարագայում տեսանյութով չուղեկցվող հրապարակումների տոկոսը 29.4 է, մինչդեռ tert.am-ի 24 հոդվածներից և ոչ մեկը կից տեսանյութ չունի: Հոդվածների կեսից ավելին տեսանյութերով է ուղեկցվում նաև lragir. am-ի պարագայում՝ 36.45%-ն է, որ առանց կից տեսանյութի է: Մյուսների պարագայում իրավիճակը շատ ավելի մոտ է ընդհանուր համամասնություններին: Բոլոր տեսանյութերն էլ շարունակում են նույն ուղեգիծը, ինչ տրված է տեքստային մասում: Ինչպես և Գևորգ Սաֆարյանի պարագայում, հոդվածների ճնշող մեծամասնությունը ունի կից տրվող պատկեր: Միայն 2.6 %-ի պարագայում է, որ հոդվածն առանց պատկերի է: Օգտագործվող պատկերների տրամաբանությունը նույնպես համանման է Գևորգ Սաֆարյանի դեպքի լուսաբանմանը. 44.8% դեպքերում թիրախավորված ակտորի կամ վերջինիս աջակիցների ընդհանուր նկարներ են, 29.5 %-ի դեպքում՝ թիրախավորման դեպքը փաստող կամ դեպքի հետ անմիջական առնչվող լուսանկարներ: Թիրախավորման բացահայտ կամ լատենտ կողմնակիցների նկարներով հոդվածները ուղեկցվում են միայն 1.9% դեպքերում՝ Armtimes.com (1 դեպք), aravot.am (2 դեպք), tert.am (2 դեպք) կայքերում: Հոդվածների 72 %-ը հեղինակ չունի: Այստեղ դրսևորվում է լրատվամիջոցների ընդհանուր քաղաքականությունը. հեղինակ ընդհանրապես նշված չէ epress.am, tert.am, news.am, a1plus.am կայքերի հրապարակումներում: Հեղինակին առավել հաճախ նշում են azatutyun.am-ում (82.4%), aravot.am-ում (61.9%), armtimes.com-ում (36%), lragir.am-ում (27.3%):

*Վարդգես Գասպարիի առցանց լուսաբանում*



- **Azatutyun.am** - դեպքին առնչվող 17 հրապարակումներից **47.1 %-ի** պարագայում դրանք ներկայացնում են հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տրամաբանությունը՝ կա՛մ որպես միակ տեսակետ, կա՛մ որպես գերակշռող տեսակետ: Մի կողմից հրապարակումների զգալիորեն ավելի փոքր թիվը, քան Գևորգ Սաֆարյանի պարագայում էր, մյուս կողմից այդ հրապարակումների մեջ խոցելիության կամա թե ակամա մեծացմանը նպաստող նյութերի ավելի մեծ համամասնությունը լրատվամիջոցի՝ լուսաբանման թիրախ հանդիսացած անձի հանդեպ ուղղորդված վերաբերմունքի հարց է առաջ քաշում:
- **Aravot.am** - 63 հոդվածներից **28.6% -ը** ներկայացնում են հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիություն՝ իբրև միակ կամ գերակշռող տեսակետ:
- **Armtimes.com** - 50 հոդվածների շրջանում **28 %** է կազմում հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության գերակշռմամբ կամ միակ տեսակետը ներկայացնող նյութերի համամասնությունը:
- **1in.am** - դեպքին առնչվող 16 հոդվածների մեջ **25%** են կազմում այն նյութերը, որոնք ներկայացնում են հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունը որպես միակ կամ գերակշռող տեսակետ:
- **A1plus.am** - դեպքի մասով լրատվամիջոցը ներկայացրել է ընդհանուր առմամբ 29 հրապարակում, որոնցից **24.1%-ի** դեպքում հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունը միակ կամ գերակշռող տեսակետ է:
- **Tert.am** - 24 հրապարակումներից **20.8%-ը** ներկայացնում են հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունը իբրև միակ կամ գերաշկռող դիրքավորում:
- **News.am** - թեմատիկ 22 հոդվածներից **18.2%-ի** պարագայում հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տրամաբանությունը միակն է կամ գերակշռում է:
- **Epress.am** - 36 հոդվածներից **16.7%-ն** են, որ ներկայացնում են հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունը իբրև միակ կամ գերակշռող տեսակետ:
- **Lragir.am** - 11 հոդվածներից և ոչ մեկում հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տեսակետի գերակշռում առկա չէ. ցուցանիշը կազմում է **0%**: Հարկ է նշել, որ lragir.am-ի պարագայում ցուցանիշը ամենացածրն էր նաև Գևորգ Սաֆարյանի դեպքի առնչությամբ, սակայն հոդվածների թիվն այդ պարագայում 28-ն էր՝ ավելի քան կրկնակի: Հաշվի առնելով նախորդ տարվա մոնիտորինգի

արդյունքներով արձանագրված այն միտումը, որ Iragir. am-ը հակված է անդրադառնալ և առավել ինտենսիվ լուսաբանել այն իրադարձություններն ու դեպքերը, որոնք լրատվամիջոցի ընդհանուր ուղեգծի մաս կարող են կազմել՝ կարող ենք ենթադրել, որ տվյալ դեպքում Վարդգես Գասպարիի շուրջ ծավալված իրադարձությունները այդ ընդհանուր ուղեգծին չեն համադրվել, ուստի և գրեթե չեն լուսաբանվել:

Հոդվածների 96.3 %-ի պարագայում լրատվամիջոցի սեփական դիրքորոշում ներկայացված չէ: Նպատակաուղղված խոցելիության դրսևորում՝ որպես սեփական դիրքորոշում, ներկայացված չէ որևէ լրատվամիջոցում: Սեփական դիրքորոշում համեմատաբար զգալի է միայն Iragir.am-ի պարագայում, որտեղ 45.5% է կազմում սեփական դիրքորոշմամբ հրապարակումների թիվը. դիրքորոշումն այստեղ արտահայտված է խոցելիության հաղթահարման տրամաբանության մեջ: Սա համադրվում է Iragir.am-ի՝ իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիության ինդեքսի ներքին հորիզոնականում ունեցած դիրքի հետ Վարդգես Գասպարիի առնչությամբ տեղի ունեցած դեպքերի լուսաբանման ընթացքում: Գերակշիռ մեծամասնությամբ խոցելիության հաղթահարման տրամաբանության մեջ են նաև սեփական դիրքորոշման այն հատուկենտ դրսևորումները, որ առկա են որոշ այլ լրատվամիջոցների պարագայում:

Վերնագրերի առնչությամբ լրատվամիջոցների ռազմավարությունն ըստ էության համանման է Գևորգ Սաֆարյանի առնչությամբ տեղի ունեցած դեպքերի լուսաբանմանը: Ընդհանուր առմամբ բոլոր լրատվամիջոցներն էլ հակված են վերնագիրն ավելի ուղղորդող ձևակերպել, քան բուն հրապարակումն է, ինչի պատճառով այն վերնագրերի համամասնությունը, որոնք նմանատիպ ուղղորդում չեն պարունակում, ավելի փոքր է, քան համանման հոդվածների թիվը: Այս ռազմավարությունը առավել հաճախ կիրառում են tert.am-ը (29.2% հոդվածների պարագայում, 4.2%՝ վերնագրերի), news.am-ը (59.1% հոդվածների պարագայում, 22.7%՝ վերնագրերի): Հակադիր պատկերն է միայն Iragir.am-ի պարագայում, որի հրապարակումները ավելի ուղղորդող են, քան վերնագրերը՝ 0% հոդվածների պարագայում, 9.1%՝ վերնագրերի:

Միևնույն ժամանակ հոդվածներից շուրջ կեսի՝ 48.9%-ի պարագայում լուսաբանման թիրախ հանդիսացած անձին՝ Վարդգես Գասպարիին, աջակցություն չի հայտնվում:

Աջակցության հայտնելու դեպքերն էլ ներկայացնում են բացառապես այլ ակտորների խոսքը, ոչ թե բուն լրատվամիջոցի: Իրավիճակը, ըստ լրատվամիջոցների, հետևյալն է.

- news.am-ի և a1plus.am-ի պարագայում զգալի է աջակցություն չհայտնող հոդվածների համամասնությունը՝ համապատասխանաբար 81.8% և 79.3%:
- Աջակցության ցուցաբերումը զգալի է lragir.am-ի պարագայում՝ 81.8%: Աջակցության ցուցաբերումը առավել բարձրաձայնված է նաև armtimes.com-ի և 1in.am-ի դեպքում՝ համապատասխանաբար 66% և 62.5%:
- Մյուս լրատվամիջոցների ցուցանիշները շատ ավելի մոտ են ընդհանուր միջին պատկերին:

Ի տարբերություն Գևորգ Սաֆարյանի՝ Վարդգես Գասպարիի խոսքը առավել տեսանելի է հրապարակումներում. հոդվածների միայն 59%-ում է, որ վերջինիս խոսքը ներկայացված չէ ո՛չ անմիջականորեն, ո՛չ հիշեցման, ո՛չ էլ այլ ակտորի կողմից մեջբերման միջոցով: Վերջինիս ձայնը առավել լսելի է epress.am-ի հարթակում՝ 58.3%, azatutyun.am-ում՝ 52.9%, a1plus.am-ում՝ 48.3%: Այնինչ 1in.am-ի պարագայում այդ ցուցանիշը 18.8% է: Համեմատաբար սակավ թիրախավորված անձի խոսքը հնչել է նաև aravot.am-ի և news.am-ի պարագայում՝ համապատասխանաբար 34.9% և 27.3%: Լրատվամիջոցներն առավել հակված են նյութը լուսաբանել թիրախավորված անձի կողմնակիցների/պաշտպանների միջոցով (58.6%) կամ ներգրավելով չեզոք կողմի (16.8%): Թիրախավորման բացահայտ կամ լատենտ կողմնակիցների միջոցով նյութը լուսաբանվել է 4.5% դեպքերում: Վերջիններիս համեմատաբար ավելի մեծ հարթակ է տրամադրել 1in.am-ը՝ 12.5%:

## Ժիրայր Սեֆիլյանի ձերբակալությունը և հետագա ընթացքի լուսաբանումը. խոցելիության ինդեքսը առցանց լրատվադաշտում[3]

Սեֆիլյանի ձերբակալության և դրա հետագա ընթացքի լուսաբանումը ուսումնասիրված առցանց լրատվամիջոցներում իրականացվեց շատ ավելի նվազ

[3] *Քանի որ iravunk.am-ը այս դեպքի առնչությամբ լուսաբանում չի իրականացրել, հետևաբար վերջինիս համար տվյալ դեպքով խոցելիության ինդեքսը չի հաշվարկվել:*

ինտենսիվությամբ, քան Գևորգ Սաֆարյանի և Վարդգես Գասպարիի պարագայում: Ընդհանուր հոդվածների թիվն այս պարագայում 182 է: Չնայած ինչպես և մյուս դեպքերում լրատվության հիմնական աղբյուրը լրատվամիջոցների սեփական տեղեկատվությունն է՝ 90.1%, սակայն ուշագրավ է այս իրավիճակի տարբերությունը ըստ որոշ լրատվամիջոցների, ինչը համադրվում է հոդվածների ընդհանուր փոքր թվի հետ: Այսպիսով՝ թեման բավարար չի լուսաբանվել նաև այն տեսանկյունից, որ որոշ լրատվամիջոցներ զգալի թվով հրապարակումների ժամանակ գերադասել են հղել այլ լրատվամիջոցների և սեփական լրատվություն չքաղել, այսպես, Iragir.am-ի պարագայում այլ լրատվամիջոցներին հղումը առկա է հոդվածներից 26.7%-ի դեպքում, aravot.am-ի պարագայում դա 23.1% է, epress.am-ի պարագայում՝ 16.7%, news.am-ի պարագայում՝ 15.4%:

Բոլոր հոդվածների 85.7%-ը նկարագրողական բնույթ ունի: Այդուհանդերձ, որոշ լրատվամիջոցներ համեմատական առումով առավել հաճախ են հրապարակել տարբեր հիմնավորումների միջոցով իրավիճակի որոշ պատկեր ներկայացնող հոդվածներ: 1in.am-ում նման հոդվածների տոկոսը կազմում է 41.2%, tert.am-ում՝ 28.6%, aravot.am-ում՝ 19.2%, armtimes.com-ում՝ 10%: Հոդվածներից 74.4%-ի պարագայում կից տեսանյութ չկա: Տեսանյութերի ընդհանրապես չեն դիմել tert.am-ն ու Iragir.am-ը: Տեսանյութերը զգալի են azatutyun.am-ի, a1plus.am-ի, 1in.am-ի պարագայում, ինչը տեղավորվում է լրատվամիջոցների ընդհանուր ռազմավարության մեջ և դիտարկելի էր նաև նախորդ դեպքերում: Տեսանյութերին երբեմն դիմում են նաև aravot.am-ն ու epress.am-ը: Այդուհանդերձ հոդվածներում առկա տեքստը հիմնականում կից տեսանյութերի սղագրությունն է: Ինչ վերաբերում է արտահայտված դիրքորոշմանը, ապա տեսանյութերն ու տեքստը բոլոր դեպքերում փոխլրացնում են միմյանց, այլ ոչ թե արտահայտում մեկը մյուսից տարբերվող դիրքորոշումներ: Հոդվածներից 9.9%-ի պարագայում կից պատկեր չկա: Սա չնայած փոքր համամասնություն է, սակայն ավելի մեծ ցուցանիշ է, քան դիտարկված երկու նախորդ դեպքերում: Այս միտումը կարելի է բացատրել թեմայի ընդհանուր առմամբ ավելի քիչ լուսաբանման փաստով: Ըստ էության, այդ հպանցիկ լուսաբանումը դրսևորվում է նաև պատկերների ավելի հաճախ բացակայությամբ: Ասվածի վկայությունն է նաև այն, որ հոդվածների շուրջ 19.8%-ի պարագայում այդ

պատկերները ընդհանուր բնույթ են կրում, ինչպես օրինակ քրեակատարողական հիմնարկի ընդհանուր նկար և այլն: Որպես կանոն այդ լուսանկարները չեն արվում հատուկ հոդվածի համար, այլ վերցվում են իբրև պատրաստի ձևանմուշ՝ հոդվածի վերջնական ձևավորման համար, ինչն էլի ցուցանում է լուսաբանման հպանցիկությունը: Թիրախավորման դեպքը փաստող կամ դեպքի հետ անմիջական առնչվող լուսանկար առկա է հոդվածներից 18.7%-ի դեպքում: Թիրախավորված ակտորի կամ վերջինիս աջակիցների ընդհանուր նկարները օգտագործված են 45.1%-ի դեպքում: Թիրախավորման բացահայտ կամ լատենտ կողմնակիցների նկարներով հոդվածներ չկան: Հոդվածներից 71.4%-ի պարագայում հեղինակ նշված չէ: Լրատվամիջոցների՝ հրապարակման հեղինակ նշելու ռազմավարությունը նույնական է մյուս դեպքերի ընթացքում ցուցաբերած մոտեցմանը: Այդուհանդերձ, ուշագրավ է, որ սովորաբար հեղինակներին առավել հաճախ նշող lragir.am-ը այս պարագայում առավել քիչ է դիմել հեղինակային նյութերին, ինչը համադրվում է լրատվամիջոցի՝ այս դեպքի լուսաբանման ընթացքում այլ լրատվության աղբյուրներին հղում տալով հրապարակումների ներկայացման ռազմավարությանը: Նմանապես համեմատաբար ավելի փոքր թիվ է կազմում հեղինակի նշումով հոդվածների թիվը armtimes.com-ում:

*Ժիրայր Սեֆիլյանի առցանց լուսաբանում*




- **Armtimes.com** - 40 հոդվածներից **42.5%-ի** պարագայում գերակշռող կամ միակ ներկայացված տեսակետը հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունն է:

- **News.am** - 26 հոդվածներից **42.3%-ի** դեպքում հրապարակումը ներկայացված է հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տրամաբանության մեջ՝ որպես միակ կամ գերակշռող տեսակետ:
- **Lragir.am** - 15 հոդվածներից **26.7%-ը** հովանավորչական խոցելիությունը ներկայացնում են որպես միակ տեսակետ:
- **1in.am** - 34 հոդվածներից **11.8%-ը** հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունը իբրև միակ տեսակետն են օգտագործում դեպքը լուսաբանելիս:
- **Aravot.am** - 26 հոդվածներից **11.5%-ի** պարագայում կիրառված է նպատակաուղղված կամ հովանավորչական խոցելիության դիտարկումը իբրև միակ կամ գերակշռող տեսակետ:
- **Epress.am, azatutyun.am, tert.am, a1plus.am** - այս լրատվամիջոցները իրենց որևէ հրապարակումներում հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տեսակետ չեն փոխանցում՝ **0%**: Միաժամանակ հարկ է նշել, որ չորս լրատվամիջոցները գումարային 41 հոդված են հրապարակել դեպքի առնչությամբ, ինչն արդեն իսկ խոսում է վերջիններիս կողմից Սեֆիլյանի ձերբակալության հպանցիկ լուսաբանման մասին: Եթե tert.am-ի պարագայում իրավիճակը բացատրելի է ընդհանուր զգուշավոր ռազմավարության մեջ, ինչի վկայությունն է նաև մյուս երկու դեպքերի նվազ լուսաբանումը՝ ի համեմատ տվյալ լրատվամիջոցի կողմից օրվա ընթացքում հրապարակվող լուրերի թվի, ապա epress.am-ի դեպքում, որն ի սկզբանե մարդու իրավունքների խախտման դեպքերին շատ ավելի մեծ ուշադրություն սևեռած լրատվամիջոց է, նման հպանցիկ լուսաբանումը թույլ է տալիս ենթադրություն անել կոնկրետ անձի առնչությամբ վերապահումների հնարավոր գոյության մասին: Azatutyun.am-ի և a1plus.am-ի կողմից քիչ թվով հրապարակումները նույնպես կարող են նմանատիպ հարցադրման հիմք դառնալ: Ամեն դեպքում, ակնհայտ է, որ անկախ իրավապաշտպանների և ակտիվիստների լուսաբանման հարցում ունեցած հիմնական ռազմավարությունից՝ լրատվամիջոցները նաև տարբեր ռազմավարություն են դրսևորում՝ կախված նրանից, թե ով է թիրախավորված անձը/խումբը:

Լրատվամիջոցի կողմից սեփական դիրքորոշում չի դրսևորվել հոդվածներից 83.5%-ի պարագայում, ինչն ավելի փոքր ցուցանիշ է, քան դիտարկված նախորդ երկու դեպքերի համար: Այս պարագայում զգալի է լրատվամիջոցների կողմից խոցելիության հաղթահարման դիրքորոշման

դրսևորումը՝ 15.9%: Նման դիրքորոշումը ամենավառը արտահայտված է aravot.am-ի պարագայում՝ 57,5%, epress.am-ում՝ 33.3%, 1in.am-ում՝ 23.5%:

Ինչպես և նախորդ դեպքերում, վերնագրերում խոցելիության ցուցադրությունը առավել հաճախադեպ է, քան բուն հոդվածներում: Այս առումով բացառություն է կազմում միայն aravot.am-ը՝ որում դիրքորոշում չարտահայտող հոդվածների տոկոսը 23.1 է, իսկ վերնագրերի տոկոսը՝ 34.6: Վերնագրերի ընդհանուր ռազմավարությունը Սեֆիլյանի դեպքի առնչությամբ առավել արտահայտված է azatutyun.am-ում. ոչ մի վերնագիր չունի, որը չի մատնանշում խոցելիությունը: Այս օրինաչափությունը զգալի է նաև tert.am-ի, epress.am-ի, news.am-ի, 1in.am-ի պարագայում:

Հոդվածներից 42.9%-ի պարագայում լուսաբանման թիրախ հանդիսացած անձին աջակցություն չի ցուցաբերվում: Իրավիճակը, ըստ լրատվամիջոցների, հետևյալն է.

- Աջակցություն չհայտնող հրապարակումների համամասնությունն առավել բարձր է armtimes.com-ի պարագայում՝ 57.5%, tert.am-ում՝ 57.1%:
- Բուն լրատվամիջոցի կողմից աջակցության արտահայտումը դրսևորված է միայն երկու լրատվամիջոցի պարագայում՝ azatutyun.am-ում՝ 14.3% և armtimes.com-ում՝ 2.5%: Մեկական հոդված armtimes.com-ում և a1plus.am-ում ներկայացնում են իրավիճակ, երբ աջակցությունը Սեֆիլյանին հայտնում են թե՛ հոդվածում խոսող այլ ակտորները, թե՛ լրատվամիջոցը:
- Մյուս լրատվամիջոցները դիմում են միայն այլ ակտորների միջոցով աջակցության արտահայտմանը: Առավելապես բարձր է նման հոդվածների համամասնությունը lragir.am-ի պարագայում՝ 66.7%, 1in.am-ում՝ 67.6%, epress.am-ում՝ 66.7%, a1plus.am-ում՝ 61.9%:
- Մյուս լրատվամիջոցներում իրավիճակը առավել մոտ է միջին ընդհանուր ցուցանիշներին:

Հոդվածներից 71.4%-ի պարագայում թիրախավորված անձի խոսքը ներկայացված չէ ո՛չ ուղղակի ներկայացման, ո՛չ այլ ակտորի կողմից մեջբերման, ո՛չ հիշեցման տեսքով: Համեմատաբար առավել հաճախադեպ է այլ ակտորների միջոցով թիրախավորված անձի խոսքի ներկայացումը՝ 20.3%: Սեֆիլյանի խոսքը ներկայացնելուն համեմատաբար ավելի մեծ հարթակ են տրամադրել epress.am-ը՝ 16.7% և azatutyun.am-ը՝ 42.9%: Այդուհանդերձ, հաշվի առնելով, թե որքան փոքր էր հրապարակումների ընդհանուր թիվն այս

լրատվամիջոցներում, նշված իրավիճակը լուսաբանման ընդհանուր ֆոնը չի փոխում: Այսպիսով՝ Սեֆիլյանի ձերբակալման և դրա հետագա ընթացքին առնչվող իրադարձությունների լուսաբանումը առավել հպանցիկ էր, վերջինիս խոսքը՝ ավելի անլսելի, քան նախորդ երկու դեպքերն էին: Սա մի կողմից կարող է զարմանալի թվալ՝ հաշվի առնելով, որ թե՛ այս պարագայում, թե՛ նախորդ դեպքերում խոսքը կոնկրետ անձի ձերբակալման մասին է: Հոդվածներից 42.3%-ի դեպքում խոսող ակտորը հանդիսանում է Սեֆիլյանի գաղափարակից կամ պաշտպան: Թիրախավորման բացահայտ կամ լատենտ կողմնակիցները խոսում են 3.8% դեպքերում: Եվս 28%-ի պարագայում խոսող ակտորը չեզոք կողմ է: Ինչպես և Գասպարիի պարագայում, թիրախավորման բնութագրիչ կիրառելու պարագայում օգտագործված է միայն քաղաքական բնութագրիչը: Այս բնութագրիչը կիրառված է հոդվածներից 81.3%-ի պարագայում:

### «Սասնա ծռեր»-ի կողմից ՊՊԾ գնդի գրավումից հետո հանրային ակցիաների, հավաքների, երթերի ընթացքում խաղաղ հավաքների, ակցիաների անցկացման իրավունքի ոտնահարման, որոշ ակտիվիստների, իրավապաշտպանների առանձնակի թիրախավորման լուսաբանում

«Սասնա ծռեր»-ի առնչությամբ տեղի ունեցած դեպքերի լուսաբանումը ամենաինտենսիվն է իրականացվել: Ընդհանուր առմամբ ուսումնասիրված լրատվամիջոցներում եղել են 2157 հրապարակումներ: Հոդվածներից 93.6%-ի պարագայում աղբյուրը սեփական լրատվությունն է: Չնայած հոդվածների 80.9%-ը ունի զուտ նկարագրական բնույթ, սակայն ի տարբերություն դիտարկված մյուս երեք դեպքերի՝ այստեղ կարելի է տեսնել հեգնական հոդվածներ՝ երկուսը aravot.am-ում և երեքը՝ iravunk.com-ում: Iravunk.am-ում կարելի է տեսնել նաև պիտակավորող վեց հոդվածներ: Այսպես օրինակ.

*«Այս անգամ հատկապես ուշագրավ էր **ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ** ելույթը, որտեղ նա գրեթե ֆանտաստիկ ժանրի ֆիլմ նկարագրեց՝ նախեւառաջ նշելով, որ այսօր ուղղաթիռներ են ակտիվացել՝ ընդդեմ զինված խմբի. **«Տեղեկատվություն կար, որ այդ ուղղաթիռները ռուսական***

***ռազմաբազայի կողմից են գալիս: Այսօր եւս մի տեղեկություն սփռվեց, իբրեւ թե Կադիրովը Հայաստան տղաների հետ կռվելու համար պատրաստ է չեչեններ ուղարկել, ուրեմն՝ իշխանությունները պարտավոր են հրապարակային հայտարարություն անել, որ Հայաստանում որեւէ օտար ռազմական տեխնիկա, որեւէ օտար վարձկան չի լինելու»***: *Հիշեցնենք, որ վեց օր առաջ էլ նմանատիպ հայտարարություն էր հնչում ոստիկանության ՊՊԾ գունդը գրաված զինված խմբի անդամ* ***ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ*** *կողմից, ով վստահեցնում էր, թե իշխանությունները պատրաստվում են գազային գրոհի եւ ՌԴ-ից ռուսական «Ալֆա» ջոկատ է գալիս՝ 65 հոգուց բաղկացած: Սակայն, ո՛չ «Ալֆան» եկավ, ո՛չ էլ չեչեններից լուր կա»[4]:*

*«Մինչ զինված խմբի հանձնվելը, շրջանառության մեջ մտավ Ժիրայր Սեֆիլյանի նամակը: Եվ մեկ նկատառում. ՊՊԾ գունդը գրավելու պահին զինված խումբը մի պահանջ էր առաջադրում՝ ազատել Սեֆիլյանին: Իսկ դա նշանակում է, որ երկու ոստիկանի կյանք խլած եւ տասնյակներին հիվանդանոցներ գցած այս պատմությունը հանուն Սեֆիլյանի հիշատակված նամակում տեղ գտած գաղափարների էին: Ուրեմն այդ ի՞նչ հանճարեղ պահանջներ է Սեֆիլյանն առաջ քաշում, որ հանուն դրա կարելի էր նման զոհաբերությունների գնալ»[5]:*

Եվս 18.5%-ի պարագայում առկա են որոշակի հիմնավորումների, փաստարկների հիման վրա որոշակի տեսակետ առաջ տանող հոդվածներ: Հոդվածների 79.1%-ը կից տեսանյութ չունի: Տեսանյութի առկայությամբ հրապարակումներով առավել հաճախ են հանդես եկել azatutyun.am-ն (44.4%) ու a1plus.am-ը (41.2%), ինչը համադրվում է լրատվամիջոցների ընդհանրական ռազմավարությանը: Ուշագրավ է, որ եթե azatutyun.am-ի պարագայում տեսանյութով ուղեկցվող հրապարակումների գրեթե կեսի դեպքում տեքստը տեսանյութի սղագրությունն է, ապա a1plus.am-ի պարագայում հիմնական տեղեկատվությունը փոխանցվում է հենց տեսանյութի միջոցով, տեքստը չնչին է: Տեսանյութ գրեթե չի հանդիպում tert.am-ի (3.8%), iravunk.com-ի (5.3%), news.am-ի (8.5%) հրապարակումներում: Ընդամենը հինգ դեպքում է, որ տեսանյութի և տեքստի միջև կան հակասություններ՝ արտահայտված դիրքորոշումների մասով: Այդ դեպքերից 2-ը դրսևորվել են armtimes.com-ի

---

4 *Տե՛ս Ալֆան չեկավ, սպասում են չեչեններին: (25.07.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.iravunk.com/news/6948:*

5 *Տե՛ս Ժիրոն ակամա խոստովանեց, թե ում շահերով է գործել: (31.07.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.iravunk.com/news/7394:*

հրապարակումներում, մեկական՝ iravunk.com, epress.am, azatutyun.am լրատվամիջոցներում: 2157 հոդվածներից ընդամենը 12-ը կամ 0.6%-ն է, որ չեն ուղեկցվում կից պատկերով: Սա ամենացածր ցուցանիշն է դիտարկված չորս դեպքերի պարագայում, ինչը տրամաբանական է առավել ինտենսիվ լուսաբանման համատեքստում: Համեմատական առումով առավել քիչ են նաև ընդհանուր բնույթի պատկերները, որոնք առավել զգալի էին մյուս դեպքերի լուսաբանման ընթացքում, մասնավորապես դրանք կազմում են ընդամենը 17.1%: Պատկերների առավել նշանակալի մասը կազմում են թիրախավորման դեպքը փաստող կամ դեպքի հետ անմիջական առնչվող լուսանկարները (36.2%), թիրախավորված ակտորի կամ վերջինիս աջակիցների ընդհանուր նկարները (30.1%): Նկատենք, որ միայն iravunk.com-ի 1 հրապարակումն է պարունակել ծաղրանկար (տե՛ս ստորև տրվող պատկերը[6]):




Հոդվածների 69%-ի դեպքում հեղինակ նշված չէ: Այս իմաստով առանձին լրատվամիջոցների ցուցանիշները

[6] *Տե՛ս Ղարաբաղյան գործընթացի «Ժիրոյական խութերը»: (22.07.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.iravunk.com/news/6785:*

կրկնում են նրանց ընդհանուր ռազմավարությունները՝ հեղինակ նշել կամ չնշելու իմաստով:

Հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիու-թյան՝ իբրև միակ կամ գերակշռող տրամաբանության նյութերի ներկայացման ընթացքում բոլոր լրատվամիջոց-ների պարագայում ակնհայտ է հետևյալ միտումը՝ այդ նյութերի կեսից ավելին (~66.4%) ցուցանում են ոչ թե նպատակաուղղված, այլ հովանավորչական խոցելիություն: Միակ ընդգծված տարբեր մոտեցումը տեսանելի է iravunk.com-ի դեպքում, որի նման նյութերի 82.1%-ը ներկայացնում է նպատակաուղղված խոցելիությունը իբրև միակ կամ գերակշիռ տեսակետ: Ընդ որում, նման նյութերի մեծամասնությունը նպատակաուղղված խոցելիությունը ներկայացնում է իբրև միակ տեսակետ:

*Սասնա ծռեր խմբավորման առցանց լուսաբանում*




- **Iravunk.com** - 94 հոդվածներից **29.8%-ի** պարագայում ներկայացվող տեսակետը հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունն է՝ որպես միակը կամ գերակշիռը:
- **Epress.am** - 100 հոդվածներից **22%-ում** ներկայացվում է մեծամասամբ հովանավորչական խոցելիությունը որպես միակ կամ գերակշիռ տեսակետ: Նպատակաուղղված խոցելիության՝ որպես միակ տեսակետի ներկայացմամբ ընդամենը մեկ նյութ կա, գերակշիռ տեսակետի ներկայացմամբ՝ չորսը:
- **Lragir.am** - դեպքի առնչությամբ հրապարակված

269 նյութերից **20.8%-ի** պարագայում ներկայացված է հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունը որպես միակ կամ գերակշիռ տեսակետ:

- **News.am** - լինելով առավել օպերատիվ թարմացվող՝ դեպքի առնչությամբ հրապարակել է առավել սակավ հաճախականությամբ թարմացվող Iragir.am-ից ավելի քիչ թվով՝ 248 հոդված, որոնցից **19.8%-ը** ներկայացնում են հովանավորչական, երբեմն նաև նպատակաուղղված խոցելիությունը իբրև նյութի միակ կամ գերակշիռ տրամաբանություն:
- **Aravot.am** - զգալիորեն առավել ինտենսիվ լուսաբանմամբ՝ 527 հրապարակմամբ, դրանցից **19%-ի** պարագայում ներկայացվել է հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության միակ կամ գերակշիռ տեսակետը:
- **Tert.am** - շարունակելով զգուշավոր լուսաբանման թեմատիկ սովորույթը՝ օպերատիվ լրահոսով մեդիադաշտում դիրքավորվող լրատվամիջոցն այս անգամ էլ համեմատաբար համեստ ցուցանիշ ունի՝ 185 հրապարակում, որոնցից **16.2%-ի** դեպքում ներկայացնում է հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունը որպես միակ կամ գերակշիռ տեսակետ:
- **Armtimes.com** - ընդհանուր առմամբ 302 հրապարակումներից **15.5%-ը** ներկայացնում են հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության տրամաբանությունը իբրև միակը կամ գերակշռող:
- **A1plus.am** - հոդվածների ընդհանուր թիվը 289 է, դրանցից **11.1%-ի** պարագայում նկատելի է հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիությունը որպես միակ կամ գերակշիռ տրամաբանություն: Այդուհանդերձ, 289 հոդվածներից միայն 9-ն են ներկայացնում նպատակաուղղված խոցելիության տրամաբանությունը:
- **Azatutyun.am** - դեպքի առնչությամբ հրապարակել է 142 հոդված, որոնցից **10.6%-ում** նկատելի է հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության՝ իբրև միակ կամ գերակշիռ տեսակետի ներկայացումը[7]:

Լրատվամիջոցի կողմից սեփական դիրքորոշման արտահայտում չի նկատվել 91.5% դեպքերում: Իրավիճակը, ըստ լրատվամիջոցների, հետևյալն է.

---

[7] *Azatutyun.am-ի կողմից դեպքի լուսաբանման հիմնական ռազմավարությունը հիմնված էր իրադարձությունների վայրից ուղիղ հեռարձակումների վրա, ինչով էլ և պայմանավորված է այսչափ քիչ անդրադարձը՝ ի համեմատ Գևորգ Սաֆարյանի և Վարդգես Գասպարիի դեպքերի շուրջ թեմատիկ հոդվածների քանակի:*

- Երկու լրատվամիջոց՝ news.am-ը և tert.am-ը առանձնանում են իբրև սեփական դիրքորոշումը մյուսներից սակավ արտահայտող՝ համապատասխանաբար 99.2% և 96.2%:
- Սեփական դիրքորոշման արտահայտման տեսանկյունից առավել ակտիվ են հանդես եկել epress.am-ը, a1plus.am-ը և iravunk.com-ը: Սակայն եթե epress.am-ն ու a1plus.am-ը այդ դիրքորոշումը արտահայտել են բացառապես խոցելիության հաղթահարման միջոցով՝ համապատասխանաբար 17% և 18.7%, ապա iravunk.com-ը դրսևորել է հիմնականում խոցելիության մեծացմանն ուղղված դիրքորոշում՝ 11.7% (այդ թվում՝ 1.1% հովանավորչական խոցելիություն և 10.6%՝ նպատակաուղղված խոցելիություն):
- Մյուս լրատվամիջոցների ցուցանիշները ավելի մոտ են ընդհանուր միջինին, այդուհանդերձ, բացի iravunk.com-ից՝ նպատակաուղղված խոցելիությունը որպես սեփական դիրքորոշում որևէ այլ լրատվամիջոց չի հայտնել՝ բացի aravot.am-ի մեկ հրապարակումից:

Ընդհանուր առմամբ, լրատվամիջոցները շարունակել են նաև վերնագրերի հարցում իրենց ընդհանուր քաղաքականությունը, որն է վերնագրերում իրականացնել լուսաբանվող անձի ավելի ինտենսիվ թիրախավորում, քան բուն հոդվածների տեքստերում է: Նշած ռազմավարությունը առավել հաճախակի է կիրառվել news.am-ի պարագայում, որի դեպքում թիրախավորման դեպքը առանց որևէ դիրքորոշման փաստող հոդվածների համամասնությունը 60.9% է, այնինչ վերնագրում նման դիրքորոշման բացակայությունը դիտարկվել է հոդվածներից 8.9%-ի դեպքում միայն: Այս ցուցանիշների տարբերությունը նկատելի է նաև armtimes.com-ի և tert.am-ի պարագայում՝ համապատասխանաբար 33% և 25.9%:

Հոդվածների 58%-ի պարագայում լուսաբանման թիրախ հանդիսացած անձանց աջակցություն չի հայտնվում: Իրավիճակը, ըստ լրատվամիջոցների, հետևյալն է.

- Iravunk.com-ում այդ ցուցանիշը 85.1% է: Արտահայտված աջակցությունն էլ, եղած քիչ դեպքերում, այլ ակտորների կողմից է: Լրատվամիջոցը իր կողմից նման դիրքորոշում որևէ հոդվածի պարագայում չի դրսևորել: Աջակցության արտահայտում առկա չէ նաև armtimes.com-ի հոդվածներից 70%-ի դեպքում, աջակցության պարագան էլ կրկին այլ ակտորների հիման միջոցով է, ընդամենը 2 հոդվածում է, որ լրատվամիջոցը աջակցությունը հայտնել է իր կողմից:

Բարձր է նաև tert.am-ում որևէ աջակցություն չհայտնող հոդվածների համամասնությունը՝ 64%: Այս լրատվամիջոցը սեփական աջակցություն չի հայտնել ոչ մի հոդվածում:

- Մյուս լրատվամիջոցների ցուցանիշները մոտ են ընդհանուր միջինին:
- Ընդհանրապես լրատվամիջոցի կողմից աջակցության հայտնումը բոլոր լրատվամիջոցների շրջանում կազմում է ընդամենը 0.6% կամ 12 հոդված 2157-ից: Հարկ է նշել, որ սա բնութագրական է դիտարկված բոլոր դեպքերի համար, այսպես՝ Գասպարիի դեպքում որևէ հոդված չէր գրանցվել՝ լրատվամիջոցի կողմից աջակցություն ներկայացնող, Գևորգ Սաֆարյանի դեպքում ցուցանիշը 0.5% էր, Սեֆիլյանի դեպքում՝ 1.1%[8]:

Հոդվածներից 67.8%-ում թիրախավորված անձի խոսքը առկա չէ: Այդ խոսքը հատկապես լսելի չէ iravunk.com (81.9%), tert.am (80%), news.am (79.8%) լրատվամիջոցներում: Համեմատաբար առավել լսելի է այդ խոսքը epress.am-ում (50%) և azatutyun.am-ում (51.4%): Այդ խոսքի առկայության պարագայում 17.8% դեպքերում հասանելի է թիրախավորված անձի խոսքն առանց միջնորդավորման, իսկ 12.2% դեպքերում այդ խոսքը փոխանցված է այլ ակտորների կողմից: Որպես հիմնական խոսող ակտոր՝ թիրախավորված հոդվածի թեմա հանդիսացող իրադարձության հերոսը, գաղափարակիցը կամ պաշտպանը հանդես են գալիս հոդվածների 38.6%-ի դեպքում: 25.3% դեպքերում հիմնական խոսող ակտորը չեզոք կողմ է: Թիրախավորման լատենտ կամ բացահայտ կողմնակիցները հիմնական խոսող ակտոր են եղել հոդվածների 3.2%-ի դեպքում, սակայն iravunk.com-ում այդ ցուցանիշը 14.9% է, իսկ օրինակ epress.am-ում ընդամենը մեկ հոդված կա, որում հիմնական խոսող ակտորը եղել է թիրախավորման լատենտ կամ բացահայտ կողմնակից՝ ի հակակշիռ 61% ցուցանիշի, որը ներկայացնում է թիրախավորված հոդվածի թեմա հանդիսացող իրադարձության հերոսին, գաղափարակցին կամ պաշտպանին՝ որպես հիմնական խոսող ակտոր:

55.9% դեպքերում խոցելիությունը չի հղում որևէ բնութագրիչի: Մնացած բոլոր դեպքերում այդ բնութագրիչը մեկն է՝ քաղաքականը: Սա նույնպես ընդհանրական միտում է դիտարկված չորս դեպքերի համար:

---

*[8] Սեֆիլյանի պարագայում խնդիրը ոչ թե համեմատաբար առավել մեծ աջակցության հայտնումն է, այլ ընդհանուր ավելի ցածր ինտենսիվությամբ լուսաբանման պարագայում մեկ առանձին հոդվածի առավել մեծ կշիռը, որն էլ ազդում է ստացված ցուցանիշի վրա:*

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- Բոլոր դեպքերի դիտարկման արդյունքում ակնհայտ է, որ որևէ տրամաբանությամբ հրապարակում ներկայացնելիս լրատվամիջոցներն առավել հակված են այդ տեսակետը ներկայացնել իբրև միակը: Մասնավորապես, Գևորգ Սաֆարյանի պարագայում այդպես է նյութերի 53%-ի պարագայում, Վարդգես Գասպարիի դեպքում՝ 58.2%-ի, Ժիրայր Սեֆիլյանի պարագայում ցուցանիշը կազմում է 59.9%: Փոքր-ինչ ավելի տարակարծություն է ապահովված «Սասնա ծռեր»-ի լուսաբանման պարագայում, երբ միակ տեսակետ ներկայացնող նյութերի ցուցանիշը կազմում է 42.1%: Ասվածի վկայությունն է նաև այն, որ դիտարկված չորս դեպքերի պարագայում էլ առանց որևէ մեկի գերակշռության տարբեր տեսակետներ ներկայացնող հրապարակումների տոկոսը չի գերազանցում 1.8%-ը, իսկ օրինակ «Սասնա ծռեր»-ի դեպքում 0.5% է:

- Թիրախավորման դեպքն ուղղակի փաստող հոդվածները, առանց դիրքորոշման արտահայտման, առավել ակնհայտ են «Սասնա ծռեր»-ի պարագայում՝ 52.1%, այնինչ մյուս երեք դեպքերում նման հոդվածները ավելի փոքր համամասնություն են կազմել՝ 36.3% Գևորգ Սաֆարյանի դեպքում, 29.9%՝ Վարդգես Գասպարիի դեպքում և 35.7%՝ Ժիրայր Սեֆիլյանի պարագայում: Այս ցուցանիշները վկայում են նաև լուսաբանման ինտենսիվության մասին: Ըստ էության, «Սասնա ծռեր»-ի դեպքում թիրախավորման դեպքն ուղղակի փաստող հոդվածների ավելի մեծ համամասնությունը ցուցանում է լրատվության տրամադրման գործառույթի իրականացման մասին, երբ խնդիրը կոնկրետ տեղեկատվության փոխանցումն է: Մյուս պարագաներում, քանի որ տեղեկատվական լուսաբանումը նվազ նշանակություն է ունեցել, դեպքերը լուսաբանվել են հիմնականում այնքանով, ինչքանով ունեցել են թիրախավորված անձի աջակիցների և հակառակորդների տեսակետները փոխանցելու խնդիր:

- Էական է նաև հասկանալ, որ չնայած երեք դեպքերի պարագայում առկա է համանման իրավիճակի լուսաբանման հիմք, այն է որոշակի գործունեությամբ զբաղված անձի՝ ազատությունից զրկելը և դրա առնչությամբ ծավալված հետագա գործողությունները, այդուհանդերձ լուսաբանումը տարբեր է համանման իրավիճակներում հայտնված երեք անձանց նկատմամբ: Առավել «անտեսվածը» այս պարագայում Ժիրայր Սեֆիլյանի շուրջ տեղի ունեցած դեպքն

էր, ինչը թույլ է տալիս վարկած առաջադրել, թե դեպքերի հետագա զարգացումը, որն է Սեֆիլյանի համախոհների կողմից ՊՊԾ գնդի գրավումը և դրանից հետո ընթացած գործողությունները կարող էին պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ Սեֆիլյանի ձերբակալությունը լրատվադաշտում, այդ թվում նաև առցանց, չստացավ հանրային այն հնչեղությունը, որը թույլ կտար նրա աջակիցներին հանրային հնչեղության այդ ռեսուրսի օգտագործմամբ հասնելու որոշակի արդյունքների, ինչպես օրինակ՝ Սեֆիլյանի՝ ազատ արձակվելուն:

- Չորս դեպքերի դիտարկման արդյունքով պարզ է նաև այն հանգամանքը, որ ավելի մեծ դիտողականություն ունեցող[9] և առավել հաճախակի թարմացվող լրահոսով լրատվամիջոցները, որոնք են «Սասնա ծռեր»-ի դեպքում news.am-ը և tert.am-ը, մյուս դեպքերում՝ նաև 1in.am-ը, նվազ ինտենսիվ են լուսաբանում իրավապաշտպաններին և ակտիվիստներին, վերջիններիս գործունեությունը և նրանց շուրջ տեղի ունեցող իրադարձությունները, քան այն լրատվամիջոցները, որոնք դրանց համեմատ առավել սակավ են թարմացնում լրահոսը և ունեն ավելի փոքր դիտողականություն: Այսպես օրինակ՝ նույնիսկ «Սասնա ծռեր» զինյալ խմբի շուրջ ծավալված իրադարձությունները, որոնք մեծ հնչեղություն ստացան, news.am-ում առիթ են հանդիսացել 248 հրապարակման, որն ավելի փոքր թիվ է, քան նվազ հաճախականությամբ թարմացվող Iragir.am-ում (269), aravot.am-ում (527) և այլն: Tert.am-ը առավել ետնապահ դիրքերում է՝ 185 հոդվածով: Իրավիճակը նմանատիպ է նաև մյուս դեպքերի լուսաբանման ժամանակ: Սա նշանակում է, որ թեման լուսաբանման տեսանկյունից մնում է հիմնականում առավել փոքր լսարան ունեցող լրատվամիջոցների բեռը: Հաշվի առնելով, որ այս ուսումնասիրությունը դիտարկել է տարվա կտրվածքով ամենամեծ հնչեղություն ստացած դեպքերը՝ հարկ է ընդգծել, թե ինչքան ավելի լուսանցքային է բոլոր այն խնդիրների և իրադարձությունների լուսաբանումը, որոնք առնչվում են իրավապաշտպանական և ակտիվիստական գործունեությանը, սակայն չեն հասնում հանրային հնչեղության որոշակի մակարդակի: Այս դեպքում տվյալ խմբերի խոցելիությունը մեծապես կառուցակցվում է լրատվադաշտում իրենց անտեսանելիության միջոցով:
- Դիտարկված 4 դեպքերի լուսաբանման շրջանակներում հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության

[9] *Տե՛ս Top sites in Armenia: 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.alexa.com/topsites/countries/AM:*

տրամաբանությունը՝ կա՛մ որպես միակ տեսակետ, կա՛մ որպես գերակշռող տեսակետ, այսպիսով ստանում է հետևյալ գրաֆիկական տեսքը՝

*Հովանավորչական կամ նպատակաուղղված խոցելիության դրսևորում*[10]




[10] *ՀԻՇԵՑՈՒՄ. iravunk.com-ի պարագայում ինդեքսը չի հաշվարկվել Գևորգ Սաֆարյանի դեպքի լուսաբանման, իսկ 1in.am-ի պարագայում՝ «Սասնա ծռեր»-ի շուրջ ծավալվող իրադարձությունների լուսաբանման շրջանակներում խոցելիության ինդեքսի չափման ժամանակ։*

Azatutyun.am




News.am




Lragir.am




1in.am




A1plus.am



# Գլուխ 4

## Իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիությունը հայաստանյան առցանց մեդիադաշտում. լուսաբանման թիրախ խմբերի/անձանց դիտանկյունը

Դիտարկված չորս դեպքերից երեքի պարագայում թիրախավորված անձինք գտնվում են անազատության մեջ, ինչն էականորեն բարդացնում է վերջիններիս դիտանկյան ներառման հնարավորությունը և սկզբունքորեն իմաստազրկում միայն մեկ անձի՝ Վարդգես Գասպարիի միջոցով թվային տվյալների ստացումն ու ներկայացումը: Հետևաբար, ներկայացնելով կից տրվող հարցաթերթիկը, որ կարող է գործիք ծառայել համանման այլ հետազոտությունների շրջանակներում, փորձենք այս կողմի ներկայացումն իրականացնել հիմնականում երկրորդային վերլուծության միջոցով՝ հենվելով առկա տեղեկատվության և հասանելի տվյալների վրա:

Ուսումնասիրելով առկա նյութերը՝ կարող ենք առաջ քաշել հետևյալ հիմնական ենթադրությունները.

- Թիրախավորված անձանց խոցելիության բարձրացմանը զուգընթաց այդ խոցելիությունը սկսում է տարածվել նաև վերջիններիս հարազատների նկատմամբ, օրինակ՝ Վարդ-գես Գասպարիի պարագայում վերջինս բարձրաձայնեց նաև իր կնոջը ներգրավելու փորձերի մասին. «Հերթը հասավ կնոջս՝ Անահիտ Այվազիին. ՀՔԾ-ն սպառնում է բերման ենթարկել Անահիտին. Նուբարաշենում ինձ կտտանքների ենթարկելու կապակցությամբ, որպես

վկա հարցաքննության է կանչվել Անահիտը, նշելով, որ չներկայանալու դեպքում կարող է բերման ենթարկվել… Թե կինս տանը նստած ինչով կարող է հաստատել կամ հերքել Նուբարաշենում կատարվածը, չափազանց դժվար է ասել… Իսկ ՀՔԾ-ն իրականում փորձում է հաշիվ պահանջել իմ ընտանիքից»[1]: Գասպարին մի առիթով նշել է նաև, որ ընտանիքի անդամներն ավելի շատ են սթրեսի ենթարկվում, քան ինքը, որն անմիջական բռնությունների է ենթարկվում պայքարի պատճառով[2]: Հարազատների նկատմամբ ճնշումների մասին բարձրաձայնում են նաև թիրախավորված այլ անձանց պարագայում, ինչպես օրինակ՝ «Սասնա ծռեր» խմբավորման անդամներից մեկի՝ Մարտիրոս Հակոբյանի որդուն ձերբակալել էին, բերման էին ենթարկել նաև նույն խմբի անդամներից Կյուրեղյանի մորը. «Կնոջս բերման են ենթարկել այն կասկածանքով, իբր, ամսի 17-ին ինքը սառը զենք է ունեցել, իբր, պայուսակի մեջ դաշույնատիպ դանակ են հայտնաբերել»[3]:

- Լուսաբանման տեսանկյունից թիրախավորված անձանց շրջանում նկատելի է համացանցի՝ իբրև կոմունիկացիոն հարթակի և լրատվամիջոցների առանձնացումը՝ իբրև հակադիր տեղեկատվության աղբյուրների: Մասնավորապես, համացանցը, հասկացվելով իբրև առավելապես սոցիալական ցանցերի հարթակ, դիտարկվում է որպես ավելի ազատ դաշտ, որտեղ հնարավոր է որոշակի ճշմարիտ տեղեկատվության առկայություն, այնինչ դասական լրատվամիջոցները, ինչպես հեռուստատեսությունն է, դիտվում է իբրև իշխանության կցորդ, այս դեպքում՝ իբրև այն համակարգի մաս, որն իրենց փորձում է ազատազրկել՝ ներկայացնելով իբրև օրինազանց և հանցագործ: Զարմանալի չէ, որ թիրախավորված անձանց մի մասը հենց համացանցը և մասնավորապես սոցիալական ցանցերն են դիտում իբրև իրենց ասելիքը փոխանցելու միջոց: Օրինակ՝ «Սասնա ծռեր» խմբավորման որոշ անդամներ գրություններ են փոխանցում, որոնք հրապարակվում են սոցցանցերում, անում են միջնորդավորված հայտարարություններ, որոնց տարածման միջոցը կրկին հիմնականում սոցցանցերն են: Ինչ վերաբերում է հեռուստատեսության կողմից թիրախավորմանը, ապա այս առումով բնութագրական է թիրախավորված անձանցից մեկի՝ Ժիրայր Սեֆիլյանի

[1] *«ՀՔԾ-ն սպառնում է բերման ենթարկել կնոջս». Վարդգես Գասպարի: (12.03.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է՝ http://mamul.am կայքում:*

[2] *Տե՛ս «Գաղափարի համար պետք է վճարել». Վարդգես Գասպարի, մարդ ով պայքարում է: (14.03.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ http://medialab.am/news/id/6832:*

[3] *Տե՛ս Կյուրեղյանների մորը բերման են ենթարկել: (05.08.2016): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է http://aysor.am կայքում:*

կողմից դատական հայցի ներկայացումը ընդդեմ «Արմենիա» Թի-Վի-ի: «Ժիրայր Սեֆիլյանն ....դիմել էր «Արմենիա» Թի-Վի-ի գլխավոր տնօրենին՝ հայտնելով, որ հեռուստաընկերության «Սուր անկյուն» հաղորդաշարի 2016թ. հունիսի 12-ի 197-րդ թողարկման մի մասը («Հաղթանակը շատ հայրեր ունի» խորագրով հետաքննության հատվածը (26:25-37:10), ինչպես նաև դրա վերաբերյալ անոնսները) Արցախյան պատերազմի մի դրվագի խեղաթյուրված ներկայացման միջոցով պատրաստվել և հրապարակվել է՝ իր պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը արատավորելու ուղղակի դիտավորությամբ ու հստակ նպատակադրմամբ: Ժիրայր Սեֆիլյանը քաղաքացիական հայց է ներկայացրել՝ հեռուստաընկերությունից պահանջելով հերքել իր վերաբերյալ տարածված կեղծ տեղեկությունները, ինչպես նաև իրենից հրապարակային ներողություն խնդրել»[4]: Այս իրավիճակը մեկնաբանելով՝ հետագայում թիրախավորված անձանցից մեկը՝ «Սասնա ծռեր» խմբավորման անդամ Վարուժան Ավետիսյանը հայտարարել էր. «Մշտապես Սեֆիլյանի և նրա կողմնակիցների քաղաքական գործունեության ակտիվության պիկերի ժամանակ Սեֆիլյանի վերաբերյալ զրպարտչական ու վարկաբեկիչ բնույթի քարոզչական արշավներ են սկսվում, որոնք զուգորդվում են Սեֆիլյանի կերպարի հրեշացման մասին տեղեկություններով, որին էլ հաջորդում են Սեֆիլյանի և նրա կողմնակիցների նկատմամբ իրավական կամ ֆիզիկական բռնությունները»: Այսպիսով՝ տվյալ դեպքում մեդիալուսաբանումը կրում է իբրև տվյալ անձանց նկատմամբ վարված քաղաքականության լեգիտիմացիայի ապահովման միջոց՝ հանրային ընկալման մակարդակում փորձելով ապահովել այդ քաղաքականությունների տրամաբանական և անխուսափելի լինելը:

- Հետաքրքիր է, որ նույնիսկ այս պայմաններում «Սասնա ծռեր» խմբավորումը պահանջեց ուղիղ եթեր և մամլո ասուլիսի կազմակերպում, ինչը վկայում է այն մասին, որ թիրախավորված անձանց կողմից մեդիայի կարևորությունը գիտակցված է, և որոշակի իրավիճակներում վերջիններս փորձում են դիմել այդ կարևոր աղբյուրի՝ իրենց կողմից վերահսկողության պայմաններում օգտագործման հնարավորությանը: Հակառակ պարագայում թիրախավորված անձինք խիստ հավանական են համարում տեղեկատվության խեղաթյուրված ներկայացումը և փորձում խուսափել այդ տեղեկատվության տրամադրումից՝ այդ կերպ նաև

[4] *Ապրիլի 20-ին կիրապարակվի Ժիրայր Սեֆիլյանն ընդդեմ «Արմենիա TV»-ի վճիռը: (08.04.2017): 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://mamul.am/am/news/102896:*

փորձելով ապահովագրել իրենց ապատեղեկատվությունից: Հիշատակված դեպքում այդ վերահսկողությունը պետք է ընձեռեր ուղիղ եթերի ռեժիմը, որ չապահովվեց: Ուղիղ եթեր ապահովվեց սակայն խմբավորման անդամների կողմից զենքը վայր դնելու և հանձնվելու ընթացքում՝ առանց մեկնաբանության ռեժիմում:

Թիրախավորված անձանց կողմից մեդիալուսաբանման հանդեպ ունեցած վերաբերմունքի մասով ուշագրավ տեղեկություններ է պարունակում նաև «Սասնա ծռեր» խմբավորմանը որոշ ժամանակով միացած Արթուր Սարգսյանի՝ Հաց բերողի կողմից տրված հարցազրույցը[5]:

Ուշագրավ է, որ այս հարցազրույցում Արթուր Սարգսյանը նշում է, որ իրեն հարկ չկա ներկայացնելու, քանի որ արդեն իսկ լրատվամիջոցների շնորհիվ հանրությունը ճանաչում է իրեն: Այսպիսով, ընդգծվում է մեդիադաշտի կողմից լուսաբանման առաջին հետևանքը՝ անձի ճանաչումը: Այդուհանդերձ, այդ ճանաչումը դիտվում է իբրև խնդրահարույց, քանի որ կարևոր է նաև, թե մեդիադաշտի շնորհիվ ինչպես են ճանաչել իրենց: Մասնավորապես, Արթուր Սարգսյանը նշում է արտիկուլացված երեք կերպարների մասին և մատնացույց անում, թե որն է համապատասխանում իրականությանը.

«Տարածվեցին երեք իրավիճակներ, առաջինը որ այդ անձը [Արթուր Սարգսյանը՝ ինքն իր ձևակերպմամբ] ազգային անվտանգության աշխատակից է, որ ներդրվել է հենց այդ գործողության հետ կապված այդ խմբում, որպեսզի ինֆորմացիա կորզի: Երկրորդ. հնարավոր չէ, որ մի անձ, որ չի ճանաչում ներսում գտնվողներից մեկին, իր սեփական միջոցներով.... և կյանքը վտանգելով իրականացնի այդ գործողությունը: Երրորդ, որ այդ անձը իրոք ոչ ոքի չէր ճանաչում և ինքնաբուխ՝ քաղաքական նկատառումներից և անձի տեսակից ելնելով կատարեց այդ գործողությունը. ես երրորդն եմ»:

Այսպիսով՝ մեդիալուսաբանումը դիտարկվում է իբրև մի բան, որ ինքը մեկնաբանման և ճշգրտման կարիք ունի: Գուցե թե և այս խնդիրներից ելնելով՝ Արթուր Սարգսյանը հետագա զրույցի ընթացքում նշում է, որ կալանավորված լինելու ընթացքում եղել են տարբեր իրադարձություններ և հարցումներ, որոնք ինքը խնդրել է չլուսաբանել՝ նպատակահարմար չդիտելով: Այսպիսով,

[5] *Տե՛ս [Հարցազրույց Արթուր Սարգսյանի հետ]: (12.01.2017): [Տեսագրություն]: 2017.01.31-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://www.youtube.com/watch?v=ZxMMMg519KM:*

կարող ենք ենթադրություն անել թիրախավորված անձի կողմից լուսաբանման՝ սեփական խոցելիության նվազման տեսանկյունից ոչ արդյունավետ գործիք լինելու դիրքորոշման մասին: Միաժամանակ խոսքում հստակ է համացանցի (տվյալ դեպքում հասկացված իբրև սոցիալական ցանցեր)՝ իբրև տեղեկատվության տարածման արդյունավետ միջոցի ընկալումը: Օրինակ՝ Արթուր Սարգսյանը նշում է այն մասին, թե ինչպես է դաշտում տարածվել ՊՊԾ գունդ մտնելիս իր արտաբերած «տղե՛րք, հաց եմ բերել» արտահայտությունը, որ նաև երգի բառերի սկիզբ է դարձել: Խոսքն արդեն այստեղ տեղեկատվության առասպելականացման մասին է, որն իրականացվում է՝ համաձայն թիրախավորված անձի խոսքի, ճշմարիտ տեղեկատվության հիմքով: Այս տեսանկյունից է նա դիտարկում նաև իր հանդեպ ժողովրդական մականվան ձևակերպումը՝ հաց բերող՝ համաձայնելով տրված որակավորմանը:

Թիրախավորված անձանց կողմից մեդիալուսաբանման նշված խնդիրների բարձրաձայնումը մատնացույց է անում կարևորագույն այն խնդիրը, որ լրատվամիջոցների հանդեպ վստահությունը պայմանավորված է դրանց վերահսկողության կենտրոնի և աղբյուրի մասին գիտելիքով: Քանի որ հեռուստատեսությունն ու դասական այլ լրատվամիջոցները դիտարկվում են իբրև իշխանությունների կողմից մեծապես վերահսկվող, հետևաբար թիրախավորված անձինք ընդհանուր առմամբ չունեն վստահություն դրանց նկատմամբ: Այս պարագայում սոցիալական ցանցերը դիտարկվում են իբրև առավել ազատ հարթակ, որտեղ յուրաքանչյուրը ունի տեղեկատվության տարածման հնարավորություն և այս «ժողովրդական» լրատվադաշտի առկայությունն է, որ թույլ է տալիս փոխանցել փոքրիշատե ճշմարիտ տեղեկատվություն:

# Գլուխ 5

## Իրավապաշտպանների և ակտիվիստների խոցելիությունը հայաստանյան առցանց մեդիադաշտում. հանրային ընկալում և փորձագիտական գնահատականներ

Մեդիամոնիտորինգի տվյալների ընկալման յուրահատկությունններն ու համատեքստը պարզաբանելու նպատակով իրականացվել են հանրային ընկալման և փորձագիտական հարցումներ:

Փորձագիտական հարցման տրամաբանությունը հետևյալն էր: Փորձագետներին՝ մեդիափորձագետներ, հասարակագետներ և մեդիադաշտի խորքային իմացություն ունեցող այլ մասնագետներ, սկզբնապես խնդրվել է դասակարգել ուսումնասիրության ենթարկված տասը առցանց լրատվամիջոցները՝ որպես անձամբ իրենց տեսանկյունից առավել հավաստի և վստահելի տեղեկատվության փոխանցող: Մեկը այս պարագայում նշանակել է ամենավստահելի, տասը՝ ամենաքիչ վստահելի: Զուգահեռաբար վստահելիության և անվստահելիության այս դասակարգումը փորձագետները իրականացրել են նաև հանրային ընկալման տեսանկյունից: Ուշագրավ է, որ հարցված փորձագետները իրենց դասակարգումը հակված են ներկայացնել հանրային տարբեր ընկալումից: Այսպիսով՝ փորձագիտական ընկալումների տեսանկյունից ուսումնասիրված 10 առցանց լրատվամիջոցները դասավորվել են հետևյալ կերպ՝ ամենավստահելիից ամենաքիչ վստահելի.

*լրատվամիջոցների վստահելիության աստիճանն ըստ փորձագետների*




Հանրային ընկալման տեսանկյունից լրատվամիջոցների վստահելիության սանդղակը, ըստ փորձագետների, ստացավ հետևյալ տեսքը.

*լրատվամիջոցների հանրային վստահելիությունն ըստ փորձագետների*



Ինչպես երևում է տվյալներից, azatutyun.am-ը ամենավստահելի լրատվամիջոցն է նշվել փորձագետների կողմից թե՛ իրենց տեսանկյունից, թե՛ հանրային ընկալման տեսանկյունից:

Ուշագրավ է, որ epress.am-ը համեմատաբար ավելի վստահելի է դիտարկվել փորձագետների կողմից, սակայն ամենաանվստահելին է դիտվել հանրային ընկալման տեսանկյունից, ինչը խոսում է այս լրատվամիջոցի՝ հանրության առավել լայն շրջանակներին քիչ ծանոթ լինելու մասին, ինչն արդեն իսկ վստահության նվազման էական գործոն է: Iravunk.com-ը վտահելի լինելու խնդիրներ ունի թե՛ փորձագետների ընկալման, թե՛ հանրային ընկալման տեսանկյունից՝ համաձայն փորձագետների: Համեմատաբար ավելի կայուն են armtimes.com-ի և aravot.am-ի դիրքերը: Հանրային ընկալման տեսանկյունից, ըստ փորձագետների, 1in.am-ն ու tert.am-ը ավելի վստահելի են, քան փորձագիտական դիրքորոշմամբ:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ փորձագետներին տրվել էր մոնիտորինգի շրջանակներում յուրաքանչյուր լրատվամիջոցից մեկական թեմատիկ հոդված՝ կարդալու և այնուհետև բնութագրելու՝ համաձայն դրանում պարունակված խոցելիության հղման: Հոդվածներն ընտրվել էին պատահականության սկզբունքով՝ որպես ընտրության չափանիշ կիրառելով տվյալ լրատվամիջոցի կողմից առավել հաճախ հրապարակվող հոդվածների բնութագրիչները, այլ կերպ ասած՝ ընտրելով տվյալ լրատվամիջոցի՝ թեմատիկ ամենատիպիկ հոդվածների շարքից: Փորձագետներին հոդվածները տրվել էին անանուն՝ չնշելով հոդվածի՝ որ լրատվամիջոցին պատկանելը, և փորձագետների առջև խնդիր էր դրվել նշել նաև լրատվամիջոցը: Այս գուշակությունը փորձագետների կողմից հիմնականում չի հաջողվել: Ընդ որում, առկա են դեպքեր, երբ մեկ լրատվամիջոցին վերագրվել է մի քանի հոդված, այնինչ ցանկում ընդգրկված որոշ լրատվամիջոցների համար որևէ հոդված չի նշվել: Արդյունքը տրամաբանական է՝ հաշվի առնելով լրատվամիջոցների կողմից հիմնականում անդեմ թեմատիկ հոդվածների ներկայացումը: Մյուս կողմից, համադրելով այդ արդյունքը լրատվամիջոցների վստահելիության/անվստահելիության գնահատականների հետ, կարելի է ենթադրել, որ հրապարակված հոդվածն արդեն իսկ որոշակի կերպ է ընկալվում՝ կախված

հրապարակող լրատվամիջոցից՝ ազդեցություն թողնելով նաև խոցելիության ընկալման վրա: Ընդհանուր առմամբ, փորձագետները նույնպես առավել հաճախ են նշել, որ հոդվածների վերնագրերում որոշակի դիրքորոշում արտահայտված է՝ ի համեմատ այն հոդվածների, որոնցում տեսել են լրատվամիջոցի սեփական դիրքորոշում: Այսինքն՝ նույնիսկ եթե լրատվամիջոցը սեփական դիրքորոշում չի ցուցաբերում, ապա, ըստ փորձագիտական հարցման տվյալների, վերնագրում կարելի է դիտարկել դիրքորոշման արտահայտում:

Ինչ վերաբերում է հանրային ընկալմանը, ապա ուսումնասիրված տասը լրատվամիջոցները, ըստ վստահելիության և տեղեկատվության հավաստիության աստիճանի, հետևյալ դասակարգումն են ստացել (1-ը նշանակել է ամենավստահելին, 10-ը՝ ամենաանվստահելին, ինչպես և փորձագետների պարագայում).




Փաստորեն, հանրային ընկալմամբ ամենավստահելի և հավաստի տեղեկատվության աղբյուր է համարվում azatutyun.am-ը, այնուհետև news.am-ն ու a1plus.am-ը:

Ամենաանվստահելին այս տեսանկյունից armtimes.com-ն է, որին նախորդում է epress.am-ը: Ընդ որում, epress.am-ի պարագայում ավելի շատ գործել է այս լրատվամիջոցից իրազեկված չլինելու, հետևաբար

և չվստահելու տրամաբանությունը: Պետք է նշել, որ չնայած փորձագետներն ընդհանուր առմամբ հանրային ընկալման մասին խոսելիս ճիշտ էին նշել ամենավստահելի լրատվամիջոցներին, սակայն ակներևաբար սխալվել էին՝ iravunk.com-ը նշելով ամենաանվստահելիների շարքում, իսկ armtimes.com-ի պարագայում չտեսնելով անվստահելի լինելու մեծ խնդիրներ:

Եթե փորձենք այս դիտանկյունից նայել այն հանգամանքին, թե հոդվածները ընթերցելիս հարցվողներն ինչին են առավել շատ կարևորություն տալիս թվարկված վեց գործոններից, ապա կտեսնեք, որ հարցվողների կողմից առավել կարևորվել է նախևառաջ հենց հոդվածի տեքստը, ապա թե որ լրատվամիջոցն է հրապարակել նյութը, այնուհետև մարդիկ հակված են հավասարապես կարևորություն տալ տեսանյութին, եթե այն առկա է և նյութի վերնագրին: Յոդվածն ուղեկցող պատկերը սակավ կարևոր է, իսկ հրապարակման հեղինակն ըստ կարևորության վերջին տեղում է: Յեղինակի հարաբերական անկարևորությունը կարող է պայմանավորված լինել մի քանի հանգամանքներով, ինչպես.

- առցանց դաշտի առանձին լրագրողների քիչ ճանաչելի լինելը հանրային լայն շրջանակներին,
- այն ընկալումը, թե լրատվամիջոցի խմբագրական քաղաքականությունը պարտադիր է դրա աշխատակիցների համար, ուստի կարևոր է լրատվամիջոցը, ոչ թե կոնկրետ որ աշխատակիցն է գրել հոդվածը, որը միևնույն է արտահայտելու է տվյալ լրատվամիջոցի ընդհանուր դիրքորոշումը,
- ինչպես նաև գրագողության տարածվածության և ինքնուրույն կարծիքի բացակայության այն մշակութային համատեքստը, որը կամայական խոսքը մեծ հավանականությամբ, հատկապես հանրային ընկալման դաշտում զրկում է իր հեղինակային իրավունքից:

Ընդհանուր առմամբ ուշագրավ է, որ հանրային ընկալման տեսանկյունից հարցվողները, որոնք նույնպես կարդացել էին հոդվածներ՝ ընտրված ուսումնասիրված տասը լրատվամիջոցներից, հակված էին առավել հաճախ դիտարկել հոդվածներում որևէ դիրքորոշման արտահայտումը, քան փորձագետները: Ինչպես և փորձագետները, հանրային ընկալման շրջանակներում հարցման ենթարկվածները գտնում են, որ թիրախավորված անձի բնութագրիչները շեշտելու պարագայում խոսքը հիմնականում քաղաքական

բնութագրիչների մասին է:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ չնայած կոնկրետ լրատվամիջոցների հանդեպ փորձագիտական և հանրային շրջանակների ընկալումները, համաձայն դրանցում տեղեկատվության վստահելիության աստիճանի, կարող են տարբերվել, սակայն ընտրված հոդվածների մեկնաբանությունները հիմնականում համընկնում են: Կարևոր է նաև, որ ընտրված հոդվածների մեկնաբանությունները համադրվում են լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքներին, ինչը հավաստում է ստացված տվյալների հուսալիությունը:

# Հավելված 1.
# Մեդիամոնիտորինգի կոդավորման թերթիկ

**ԿՈԴԱՎՈՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ**

**Իրավապաշտպանների և ակտիվիստների**
**խոցելիության ինդեքսը առցանց մեդիայում**

*Ընտրված լրատվամիջոցում անհրաժեշտ է կոդավորել միայն այն հոդվածները, որոնցում կա առնվազն մեկ արտահայտություն/խոսք մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող գաղափարի, գործողության անձի կամ կազմակերպության վերաբերյալ, որը կարող է նպաստել տվյալ ակտորի շուրջ խոցելի կերպարի ստեղծմանը/հաստատմանը: Այսպիսով, եթե նույնիսկ տվյալ նյութը խնդրո առարկա գաղափարը, գործողությունը, անձին կամ կազմակերպությանը ներկայացնում է դրական դիրքորոշմամբ, սակայն դիրքավորելով իբրև թույլ, հանրային պաշտպանության կարիք ունեցող, ճնշված, ապա նման նյութը անհրաժեշտ է կոդավորել որպես պատեռնալիստական կամ հովանավորչական խոցելիություն: Եթե նյութը խնդրո առարկա գաղափարը, գործողությունը, անձին կամ կազմակերպությանը ներկայացնում է բացասական դիրքորոշմամբ՝ ներկայացնելով իբրև որոշակի ուժ ունեցող, որի դեմ անհրաժեշտ է պայքարել, բացահայտել և այլն, ապա տվյալ նյութը պետք է կոդավորել իբրև նպատակաուղղված խոցելիություն:*

**I. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

**1. Լրատվամիջոցի անունը**

1. Հայկական ժամանակ / armtimes.com
2. Առավոտ/ aravot.am
3. Իրավունք/ iravunk.com
4. Epress.am
5. Tert.am
6. Azatutyun.am
7. News.am
8. Lragir.am
9. 1in.am
10. A1plus.am

**2. Լրատվամիջոցի լեզուն.**

1. Միայն հայալեզու
2. Հայալեզու և մեկ օտարալեզու տարբերակ
3. Հայալեզու և առավել քան մեկ օտարալեզու տարբերակ

**3. Լրատվամիջոցի տարածման ձևը.**

1. Առցանց
2. Տպագիր
3. Առցանց և տպագիր

**4. Ո՞րն է հոդվածի հիմնական շարժառիթը:**

1. **Հետազոտության թեմային առնչվող դեպքի լուսաբանում**, սակայն ոչ մեծ ժամանակային ինտերվալում (օրինակ X իրավապաշտպանի հանդեպ բռնության դեպք, բայց որի լուսաբանումը սահմանափակվում է մի քանի հոդվածով և վերջ):
2. Հանրային հնչեղություն ստացած դեպքի լուսաբանում. **Գևորգ Սաֆարյան**:
3. Հանրային հնչեղություն ստացած դեպքի լուսաբանում. **Վարդգես Գասպարի**:
4. Հանրային հնչեղություն ստացած դեպքի լուսաբանում. **ՊՊԾ գնդի գրավում**:
5. Հետազոտության թեմային առնչվող հոդվածներ (**հայտարարություններ, կոչեր, հրապարակային ելույթներ, վերլուծություններ և այլն**):

**5. Լրատվամիջոցի կողմից նյութի ներկայացման ընթացքում բազմակարծության ապահովումը.**

1. Միայն մեկ տեսակետ է ներկայացված հովանավորչական խոցելիության դրսևորմամբ:
2. Միայն մեկ տեսակետ է ներկայացված՝ նպատակաուղղված խոցելիության դրսևորմամբ:
3. Միայն մեկ տեսակետ է ներկայացված՝ խոցելիության հաղթահարման դրսևորմամբ:
4. Ներկայացված են տարբեր տեսակետներ՝ հովանավորչական խոցելիության գերակշռմամբ:
5. Ներկայացված են տարբեր տեսակետներ՝ նպատակաուղղված խոցելիության գերակշռմամբ:
6. Ներկայացված են տարբեր տեսակետներ՝ խոցելիության հաղթահարման դրսևորմամբ:
7. Ներկայացված են տարբեր տեսակետներ՝ առանց որևէ մեկի գերակշռության:
8. Թիրախավորման դեպքը փաստող հոդված՝ առանց դիրքորոշման արտահայտման:

**6. Լրատվամիջոցի կողմից սեփական դիրքորոշման դրսևորումը (իրավապաշտպանի/ակտիվիստի հանդեպ).**

1. Առավելապես հովանավորչական խոցելիություն
2. Առավելապես նպատակաուղղված խոցելիություն
3. Առավելապես խոցելիության հաղթահարում
4. Ներկայացված չէ սեփական դիրքորոշում

## II. ՀՈԴՎԱԾԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**7. Հոդվածի աղբյուրը.**

1. Սեփական լրատվություն
2. Հղում այլ լրատվամիջոցների

**8. Հոդվածի ոճը.**

1. Հիմնավորված - իրականացված է մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող որոշակի գաղափարի, գործողության, անձի կամ կազմակերպության քննարկում՝ թեր և դեմ փաստարկների ներկայացման միջոցով՝ շեշտադրում անելով դեմ փաստարկներին:
2. Պիտակավորված - իրականացված է մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող որոշակի գաղափարի, գործողության, անձի կամ կազմակերպության ներկայացում պիտակների կիրառությամբ, ինչպես օրինակ գրանտակերներ, գոմիկներ և այլն:
3. Հեգնական - իրականացված է մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող որոշակի գաղափարի, գործողության, անձի կամ կազմակերպության ներկայացում առանց պիտակների, սակայն ծաղրանք պարունակող արտահայտություններով, որոնք նպատակ ունեն նսեմացնել ներկայացված գաղափարը, գործողությունը, անձին/կազմակերպությանը:
4. Հոդվածը չի պարունակում որևէ հիմնավորում, պիտակավորում կամ հեգնանք (ունի նկարագրողական բնույթ):

**9. Հոդվածի վերնագիրը.**

______________________________________________________

**10. Հոդվածի ամսաթիվը (օր.՝ 13.07.2016).**

______________________________________________________

**11. Արդյոք վերնագիրը պարունակո՞ւմ է որևէ դիրքորոշում:**

1. Այո՛, թիրախի խոցելիությանը նպաստող հովանավորչական դիրքորոշում:
2. Այո՛, թիրախի խոցելիությանը նպաստող նպատակաուղղված դիրքորոշում:
3. Այո՛, թիրախի խոցելիության հաղթահարմանն ուղղված դիրքորոշում:
4. Վերնագիրը փաստում է թիրախի խոցելիությունը՝ առանց դիրքորոշման բացահայտման:

5. Ո՛չ, վերնագրում թիրախի խոցելիությունը մատնանշող դիրքորոշում չկա:

**12. Կա՞ հոդվածին կից տեսանյութ:**

1. Այո՛, տեքստը շարադրած է որպես տեսանյութի սղագրություն (ԱՆՑՈՒՄ հարց 14):
2. Այո՛, տեսանյութը տեղեկատվության հիմնական փոխանցողն է (չկա տեքստ, կամ չնչին է ի համեմատ տեսանյութի):
3. Այո՛, հոդվածում հիմնական տեղեկատվությունն արտահայտվում է տեքստում:
4. Ո՛չ, տեղեկատվությունը փոխանցվում է միայն տեքստի միջոցով (ԱՆՑՈՒՄ հարց 14):

**13. Հոդվածում դրված տեքստի և տեսանյութի համապատասխանությունը:**

1. Տեսանյութում և տեքստում (կամ վերնագրում) արտահայտված մոտեցումները/մտքերը փոխլրացնում են միմյանց՝ **առանց հակասությունների**:
2. Տեսանյութն ու տեքստն ունեն միմյանց հակասող շեշտադրումներ:

**14. Կա՞ հոդվածին կից նկար:**

1. Այո՛, ընդհանուր բնույթի պատկեր (օր.՝ ՄԻՊ-ի գրասենյակի նկար):
2. Այո՛, թիրախավորման դեպքը փաստող կամ դեպքի հետ անմիջական առնչվող լուսանկար (օր՝ բռնություն կիրառած ոստիկանի նկար):
3. Այո՛, թիրախավորման դեպքի հետ անմիջական կապ չունեցող, սակայն դրան հղվող պատկեր (օր.՝ հոդվածը «Սասնա ծռեր»-ի մասին է, բայց լուսանկարը «Էլեկտրիկ Երևան»-ից է):
4. Այո՛, ծաղրանկար:
5. Այո՛, թիրախավորված ակտորի կամ վերջինիս աջակիցների ընդհանուր նկարներ (փաստաբան, իրավապաշտպան, ընկեր, ակտիվիստ և այլք):
6. Այո՛, թիրախավորման դեպքը մեկնաբանող չեզոք ակտորի նկար:
7. Ո՛չ:

**15. Հոդվածի հեղինակը.**

1. Այո՛, հոդվածն ունի հստակ նշված հեղինակ՝ անուն-ազգանունի նշումով կամ հանրածանոթ կեղծանվամբ ու կարող է հեշտությամբ նույնականացվել որպես իրական անձ (հայտնի անձնավորություն/լրագրող է կամ առկա է նաև վերջինիս լուսանկարը կամ ունի սեփական սյունակը/էջը այդ կամ այլ լրատվամիջոցում):
2. Այո՛, հեղինակ նշված է, սակայն դժվար է ասել՝ հեղինակն իրական անձ, կառույց կամ այլ միավոր է, թե թաքնված է կեղծանվան տակ (կոդավորողը պետք է փորձի արտաքին այլ աղբյուրներից հասկանալ՝ հեղինակն իրական ա՞նձ է, թե՞ ոչ):
3. Ո՛չ, հոդվածի հեղինակ նշված չէ:

**16. Ո՞ւմ կամ ի՞նչ է լրատվամիջոցը թիրախավորում տվյալ հոդվածով (բացասական շեշտադրումով խոսքի թիրախը) (պետք է կոդավորել առավելագույնը երեք պատասխանի միջոցով):**

1. Անձ կամ կազմակերպություն
2. Գաղափար
3. Գործողություն

## III. ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ ՀՈԴՎԱԾՈՒՄ

**17. Արդյո՞ք հոդվածում աջակցություն հայտնվում է գաղափարին/անձին/կազմակերպությանը/գործողությանը/միջոցառմանը:**

1. Այո՛, այլ ակտորների միջոցով:
2. Այո՛, հենց լրատվամիջոցի կողմից:
3. Այո՛, և՛ այլ ակտորների, և՛ լրատվամիջոցի կողմից:
4. Ո՛չ:

**18. Հոդվածում ակտորի խոցելիության դրսևորումը/ձևը. ինչպե՞ս է հոդվածում ներկայացված թիրախավորված ակտորը:**

1. Մասամբ խոցելի (հովանավորչական խոցելիություն) (այսինքն՝ հոդվածում կան որոշակի բառեր, արտահայտություններ, որոնք **անուղղակի** կերպով ներկայացնում են ակտորին թույլ, չպաշտպանված (դրա կարիքն ունեցող)). խոսող ակտորը կարող է լինել թիրախավորված անձի գաղափարակիցը՝ այդուհանդերձ նպաստելով վերջինիս կերպարի թուլացմանը:
2. Ակնհայտ խոցելի (ակնհայտորեն օգտագործված են արտահայտություններ, բառեր՝ ուղղված ակտորի խոցելիության մատնանշմանը)

**19. Հոդվածում առկա՞ է թիրախավորված ակտորի խոսքը:**

1. Այո՛, ներկայացված է անմիջապես թիրախավորված ակտորի խոսքը:
2. Այո՛, ակտորի խոսքն օգտագործված է մեջբերման տեսքով (մեկ այլ ակտորի կողմից):
3. Այո՛, ակտորի խոսքն օգտագործված է հիշեցման տեսքով (լրատվամիջոցի կողմից):
4. Ո՛չ, հոդվածում բացակայում է թիրախավորված անձի խոսքը:

**20. Ո՞վ է հոդվածում հիմնական խոսող ակտորը իրադարձության շրջանակներում:**

1. Թիրախավորված հոդվածի թեմա հանդիսացող իրադարձության հերոս անձ/կազմակերպություն/գործողության մասնակից/գաղափարի հետևորդ: Իրադարձության հերոսի գաղափարակից կամ պաշտպան (այդ թվում ընկեր, հարազատ, փաստաբան):

2. Չեզոք կողմ (ակտորներ, որոնք փորձում են օբյեկտիվորեն մեկնաբանել իրադարձությունը և ֆորմալ/ոչ ֆորմալ կապերով կապված չեն հերոսի հետ):
3. Թիրախավորմանը բացահայտ կամ լատենտ կողմնակից:
4. Խոսող ակտոր ներկայացված **չէ**. տեքստն ունի նկարագրողական բնույթ:
5. Պաշտոնական հաղորդագրություն, հայտարարություն:

**21. Ո՞վ է հոդվածում հիմնական խոսող ակտորը:**

1. ՀՀ նախագահ
2. Վարչապետ
3. ԱԺ, ԱԺ նախագահ
4. ՆԳ նախարարություն, Ոստիկանություն
5. Արդարադատության նախարարություն, դատավորներ, բանտերի ադմինիստրացիա
6. Դատախազություն
7. ՀՀՊՆ
8. ՀՀԿ
9. ԲՀԿ
10. ՀԱԿ
11. Ժառանգություն
12. ՀՅԴ
13. Անկախ պատգամավորներ
14. ՀՀ ՏԻՄ-երի ներկայացուցիչներ
15. ՀՀ Բիզնես ներկայացուցիչներ
16. Միջազգային կառույցներ (ԵԱՀԿ, ՄԱԿ և այլն)
17. Միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ
18. Սփյուռք
19. Կրթության, գիտության ներկայացուցիչներ
20. Մշակույթի, սպորտի գործիչներ
21. Կրոնի ներկայացուցիչներ
22. ՀՀ ՄԻՊ, ՄԻՊ գրասենյակ
23. Ակտիվիստներ, նախաձեռնություններ, շարժումներ
24. ՀԿ-ներ
25. Այլ խմբեր (ազգային/ազգայնական), կուսակցություններ (Հայազն, Մեկ ազգ)
26. ՀՀ ազգային փոքրամասնություններ
27. ՀՀ կրոնական փոքրամասնություններ
28. ՀՀ սեռական փոքրամասնություններ
29. Բռնության ենթարկված կանայք

30. Սոցիալական խոցելի խմբեր (աշխատողներ, գործազուրկներ, կանայք, ծերեր, հաշմ., աղքատներ)
31. Այլ մեդիա ներկայացուցիչներ
32. Հեղինակ, տվյալ մեդիա
33. ՀՀ շարքային քաղաքացիներ
34. Այլ պետության շարքային քաղաքացիներ
35. Անհայտ խմբավորումներ (խուժան և այլն)
36. Չկա խոսող ակտոր (նկարագրողական հոդված)
37. Փաստաբան
38. «Նոր Հայաստան» հանրային փրկության ճակատ
39. «Մենք ենք տերը մեր երկրի» քաղաքացիական նախաձեռնություն
40. Այլ ________________________________________

## IV. ԹԻՐԱԽՆԵՐԸ (ԳԱՂԱՓԱՐՆԵՐ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԻՊ-ԵՐ)

*Պետք է կոդավորումն իրականացնել երեք հիմնական գաղափարների (գործողությունների, ՄԻՊ-երի) վերաբերյալ: Հիմնական գաղափարը (գործողությունը, ՄԻՊ-ը) պարզաբանելու համար պետք է հաշվել այն բառերի/տարածքի ծավալը, որոնք օգտագործված են տվյալ գաղափարը հոդվածում ներկայացնելու համար. սա քանակական ցուցիչ է, հետևաբար ոչ թե բովանդակությունը, այլ ծավալն է վճռորոշ գաղափարի հիմնականության հասկացման համար.*

**22. Գաղափար. ի՞նչ գաղափար է թիրախավորում հոդվածը (բացասական խոսքի թիրախը).**

1. Կրոնական առնչություն (աղանդներ)
2. Հավաքների ազատությունը (հանրահավաքներ, երթեր)
3. Քաղաքական միավորումներ (ընդդիմություն)
4. Շրջակա միջավայրի անվտանգությունը (բնապահպանություն)
5. ԼԳԲՏ (համասեռամոլներ)
6. Կանանց իրավունքներ
7. Այլ ________________________________________

**23. Գործողություններ. ի՞նչ գործողություն է թիրախավորում հոդվածը (բացասական խոսքի թիրախը)**

1. Հանրային քննարկումներ
2. Փակ քննարկումներ
3. Երթեր, շքերթներ
4. Հավաքներ, ցույցեր
5. Ստորագրահավաքներ, պետիցիաներ
6. Հրապարակային խոսք, հոդվածներ

7. Փողոցային ակցիաներ
8. Մասնակցություն ինստիտուցիոնալ միջոցառումներին
9. Այլ ______________________________________________

**24. ՄԻՊ-ի բնութագիրը. ո՞ւմ է թիրախավորում հոդվածը (բացասական խոսքի թիրախը):**

1. **Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվողներ/փոփոխությանը միտված ակտիվիստներ (կամ վերջիններիս խմբեր)**
2. **ՀԿ-ներ**
3. **Մարդու իրավունքների պաշտպանը /օմբուդսմեն/, գրասենյակի ներկայացուցիչները**
4. **Իրավաբաններ**, եթե հոդվածը վերջիններիս ներկայացնում է որպես մարդու իրավունքների պաշտպանների/փոփոխությանը միտված ակտիվիստների (կամ վերջիններիս խմբի)
5. **Լրագրողներ**, եթե հոդվածը վերջիններիս ներկայացնում է որպես մարդու իրավունքների պաշտպանների/փոփոխությանը միտված ակտիվիստների (կամ վերջիններիս խմբի)
6. **Քաղաքական կուսակցությունների, խմբավորումների և այլ միավորումների ներկայացուցիչներ**, եթե հոդվածը վերջիններիս ներկայացնում է որպես մարդու իրավունքների պաշտպանների/փոփոխությանը միտված ակտիվիստների (կամ վերջիններիս խմբի)
7. **Այլք (որոշյալ)**, եթե հոդվածը վերջիններիս ներկայացնում է որպես մարդու իրավունքների պաշտպանների/փոփոխությանը միտված ակտիվիստների (կամ վերջիններիս խմբի)
8. **Այլք (անորոշ)**, հիմնականում ներառում է ընդհանրացված հղումներ, ինչպես ֆեմինիստները, ակտիվիստները և այլն

**25. ՄԻՊ-ի անունը՝ ______________________________________________**

**26. Արդյոք խոցելիությունը պարունակո՞ւմ է հղում հետևյալ բնութագրիչներից որևէ մեկին** (ՄԻ ՔԱՆԻ ՏԱՐԲԵՐԱԿԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ)**:**

1. Գենդերային բնութագրիչներ
2. Քաղաքական բնութագրիչներ
3. Կրոնական բնութագրիչներ
4. ԼԳԲՏ բնութագրիչներ
5. Չկա հղում որևէ բնութագրիչի
6. Այլ ______________________________________________

## Հավելված 2.
## Փորձագիտական գնահատման հարցաթերթ

### ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ և ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ ՄԵԴԻԱՅՈՒՄ

**Փորձագիտական հարցման հարցաշար**

**1. Ստորև նշված լրատվամիջոցներից որի՞ն եք նախընտրում դիմել առավել հավաստի և վստահելի տեղեկատվություն ստանալու համար: Խնդրում ենք դասակարգել լրատվամիջոցներն ըստ վստահելիության և տեղեկատվության հավաստիության աստիճանի** *(մեկը կնշանակի ամենավստահելի, տասը՝ ամենաքիչ վստահելի):*

| | |
|---|---|
| News.am | |
| Iravunk.com | |
| Armtimes.com | |
| Tert.am | |
| Azatutyun.am | |
| 1in.am .. | |
| Epress.am | |
| A1plus.am | |
| Lragir.am | |
| Aravot.am | |

**2. Ստորև նշված լրատվամիջոցներից հանրության շրջանում ո՞րն է համարվում առավել հավաստի և վստահելի տեղեկատվություն ստանալու համար: Խնդրում ենք դասակարգել լրատվամիջոցներն ըստ Ձեր կարծիքով հանրային դիրքորոշմամբ վստահելիության և տեղեկատվության հավաստիության աստիճանի** *(մեկը կնշանակի ամենավստահելի, տասը՝ ամենաքիչ վստահելի)***:**

| | |
|---|---|
| News.am | |
| Iravunk.com | |

| | |
|---|---|
| Armtimes.com | |
| Tert.am | |
| Azatutyun.am | |
| 1in.am | |
| Epress.am | |
| A1plus.am | |
| Lragir.am | |
| Aravot.am | |

| *Ստորև նշված հարցերին պատասխանել համարակալված հոդվածներից յուրաքանչյուրը կարդալուց հետո:* |
|---|
| • ***<u>Հովանավորչական խոցելիություն.</u>*** *եթե թիրախը ներկայացվում է դրական դիրքորոշմամբ, սակայն իբրև թույլ, հանրային պաշտպանության կարիք ունեցող, ճնշված:* |
| • ***<u>Նպատակաուղղված խոցելիություն.</u>*** *եթե թիրախը ներկայացվում է բացասական դիրքորոշմամբ՝ ներկայացնելով իբրև որոշակի ուժ ունեցող, որի դեմ անհրաժեշտ է պայքարել, բացահայտել և այլն:* |
| • ***<u>Խոցելիության հաղթահարում.</u>*** *եթե թիրախը ներկայացվում է դրական դիրքորոշմամբ և, չնայած կարող է ներկայացվել իբրև ճնշման ենթարկվող, սակայն ցուցադրում կամ նկարագրում է նաև խոցելիության հաղթահարման եղանակները/մեխանիզմները:* |

**3. Ինչպե՞ս կբնութագրեիք ներկայացված տեքստը: Ստորև նշված դատողություններից ո՞րն է առավել համապատասխան դրան:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. | Միայն մեկ տեսակետ՝ հովանավորչական խոցելիություն | | | | | | | | | | |
| 2. | Միայն մեկ տեսակետ՝ նպատակաուղղված խոցելիություն | | | | | | | | | | |
| 3. | Միայն մեկ տեսակետ՝ խոցելիության հաղթահարում | | | | | | | | | | |
| 4. | Տարբեր տեսակետներ՝ հովանավորչական խոցելիության գերակշռմամբ | | | | | | | | | | |
| 5. | Տարբեր տեսակետներ՝ նպատակաուղղված խոցելիության գերակշռմամբ | | | | | | | | | | |
| 6. | Տարբեր տեսակետներ՝ խոցելիության հաղթահարման դրսևորմամբ | | | | | | | | | | |
| 7. | Տարբեր տեսակետներ՝ առանց որևէ մեկի գերակշռության | | | | | | | | | | |
| 8. | Թիրախավորման դեպքը փաստող հոդված՝ առանց դիրքորոշման արտահայտման | | | | | | | | | | |

**4. Իսկ Ձեր կարծիքով արդյոք լրատվամիջոցի կողմից սեփական դիրքորոշում արտահայտվո՞ւմ է հոդվածում: Եթե այո, ապա նշվածներից ո՞րն է առավել համարժեք բնութագրում այդ դիրքորոշումն ըստ ձեզ:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1. | Առավելապես հովանավորչական խոցելիություն | | | | | | | | | | |
| 2. | Առավելապես նպատակաուղղված խոցելիություն | | | | | | | | | | |
| 3. | Առավելապես խոցելիության հաղթահարում | | | | | | | | | | |
| 4. | Ոչ, ներկայացված չէ սեփական դիրքորոշում | | | | | | | | | | |

**5. Արդյոք վերնագիրը պարունակո՞ւմ է որևէ դիրքորոշում:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1. | Այո՛, հովանավորչական դիրքորոշում | | | | | | | | | | |
| 2. | Այո՛, նպատակաուղղված դիրքորոշում | | | | | | | | | | |
| 3. | Այո՛, խոցելիության հաղթահարմանն ուղղված դիրքորոշում | | | | | | | | | | |
| 4. | Վերնագիրը փաստում է խոցելիությունը՝ առանց դիրքորոշման բացահայտման | | | | | | | | | | |
| 5. | Ո՛չ, վերնագրում խոցելիությունը մատնանշող դիրքորոշում չկա | | | | | | | | | | |

**6. Կա՞ հոդվածին կից նկար: Եթե այո, ապա ի՞նչ բնույթի:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1. | Այո՛, ընդհանուր բնույթի պատկեր (օր.՝ ՄԻՊ-ի գրասենյակի նկար) | | | | | | | | | | |
| 2. | Այո՛, թիրախավորման դեպքը փաստող կամ դեպքի հետ անմիջական առնչվող լուսանկար (օր՝ բռնություն կիրառած ոստիկանի նկար) | | | | | | | | | | |
| 3. | Այո՛, թիրախավորման դեպքի հետ անմիջական կապ չունեցող, սակայն դրան հղվող պատկեր (օր.՝ հոդվածը «Սասնա ծռեր»-ի մասին է, բայց լուսանկարը «Էլեկտրիկ Երևան»-ից է) | | | | | | | | | | |
| 4. | Այո՛, ծաղրանկար | | | | | | | | | | |
| 5. | Այո՛, թիրախի կամ վերջինիս աջակիցների ընդհանուր նկարներ (փաստաբան, իրավապաշտպան, ընկեր, ակտիվիստ և այլք) | | | | | | | | | | |
| 6. | Այո՛, թիրախավորման դեպքը մեկնաբանող չեզոք ակտորի նկար | | | | | | | | | | |
| 7. | Թիրախավորմանը բացահայտ կամ լատենտ կողմնակից | | | | | | | | | | |
| 8. | Ո՛չ | | | | | | | | | | |

**7. Արդյոք ընդգծվո՞ւմ է թիրախի հատկանիշներից, բնութագրիչներից որևէ մեկը կամ մի քանիսը** (կարող եք նշել բոլոր համապատասխան տարբերակները):

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1. | Գենդերային բնութագրիչներ | | | | | | | | | | |
| 2. | Քաղաքական բնութագրիչներ | | | | | | | | | | |
| 3. | Կրոնական բնութագրիչներ | | | | | | | | | | |
| 4. | ԼԳԲՏ բնութագրիչներ | | | | | | | | | | |
| 5. | Չկա հղում որևէ բնութագրիչի | | | | | | | | | | |
| 6. | Այլ (մանրամասնել) | | | | | | | | | | |

**8. Ձեր կարծիքով ո՞վ/ի՞նչ է թիրախավորվում հոդվածում:**

| **Հոդվածներն ըստ համարների** | | *Ստորև մանրամասնել Ձեր ընտրած տարբերակը յուրաքանչյուր հոդվածի համար:* |
|---|---|---|
| 1. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 2. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 3. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 4. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 5. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 6. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 7. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 8. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 9. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 10. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |

**9. Ձեր կարծիքով հետևյալ լրատվամիջոցներից որի՞ն է պատկանում դիտարկված հոդվածը:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1. | Iravunk.com | | | | | | | | | | |
| 2. | A1plus.am | | | | | | | | | | |
| 3. | Armtimes.com | | | | | | | | | | |
| 4. | News.am | | | | | | | | | | |
| 5. | Aravot.am | | | | | | | | | | |
| 6. | Epress.am | | | | | | | | | | |
| 7. | Tert.am | | | | | | | | | | |
| 8. | Lragir.am | | | | | | | | | | |
| 9. | 1in.am | | | | | | | | | | |
| 10. | Azatutyun.am | | | | | | | | | | |

## Հավելված 3.
## Հանրային ընկալման հարցաթերթ

**ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ և ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ ՄԵԴԻԱՅՈՒՄ**

**Հոդվածների հանրային ընկալում**

**10. Ո՞րն է տեղեկատվություն ստանալու Ձեր հիմնական աղբյուրը** *(հարցումն իրականացնել բացառապես 2-րդ տարբերակն ընտրած հարցվողների հետ)*:

1. Հեռուստատեսային հաղորդումներ
2. Համացանց (սոցիալական ցանցեր, օնլայն մեդիաներ)

**11. Ստորև նշված լրատվամիջոցներից որի՞ն եք նախընտրում դիմել առավել հավաստի և վստահելի տեղեկատվություն ստանալու համար: Խնդրում ենք դասակարգել լրատվամիջոցներն ըստ վստահելիության և տեղեկատվության հավաստիության աստիճանի** *(մեկը կնշանակի ամենավստահելի, տասը՝ ամենաքիչ վստահելի)*:

| | |
|---|---|
| Armtimes.com | |
| Aravot.am | |
| Iravunk.com | |
| Epress.am | |
| Tert.am | |
| Azatutyun.am | |
| News.am | |
| Lragir.am | |
| 1in.am | |
| A1plus.am | |

**12. Սովորաբար հոդվածներ ընթերցելիս ինչի՞ն եք առավել շատ կարևորություն տալիս: Խնդրում ենք դասակարգել ըստ կարևորության** *(1-ը կնշանակի ամենակարևոր, 6-ը՝ ամենաքիչ կարևորություն ունեցող)*:

1. Լրատվամիջոց
2. Վերնագիր
3. Լուսանկար
4. Տեսանյութ
5. Տեքստ
6. Հոդվածի հեղինակ

| *Ստորև նշված հարցերին պատասխանել համարակալված հոդվածներից յուրաքանչյուրն ընթերցելուց հետո* |
|---|
| ● ***Հովանավորչական խոցելիություն.*** *եթե թիրախը ներկայացվում է դրական դիրքորոշմամբ, սակայն իբրև թույլ, հանրային պաշտպանության կարիք ունեցող, ճնշված:* |
| ● ***Նպատակաուղղված խոցելիություն.*** *եթե թիրախը ներկայացվում է բացասական դիրքորոշմամբ՝ ներկայացնելով իբրև որոշակի ուժ ունեցող, որի դեմ անհրաժեշտ է պայքարել, բացահայտել և այլն:* |
| ● ***Խոցելիության հաղթահարում.*** *եթե թիրախը ներկայացվում է դրական դիրքորոշմամբ և, չնայած կարող է ներկայացվել իբրև ճնշման ենթարկվող, սակայն ցուցադրում կամ նկարագրում է նաև խոցելիության հաղթահարման եղանակները/մեխանիզմները:* |

**13. Ի՞նչ հիմնական դիրքորոշում է արտահայտվում հոդվածում խոցելի հերոսի/թիրախի հանդեպ:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1. | Միայն մեկ տեսակետ հովանավորչական խոցելիություն | | | | | | | | | | |
| 2. | Միայն մեկ տեսակետ՝ նպատակաուղղված խոցելիություն | | | | | | | | | | |
| 3. | Միայն մեկ տեսակետ՝ խոցելիության հաղթահարում | | | | | | | | | | |
| 4. | Տարբեր տեսակետներ՝ հովանավորչական խոցելիության գերակշռմամբ | | | | | | | | | | |
| 5. | Տարբեր տեսակետներ՝ նպատակաուղղված խոցելիության գերակշռմամբ | | | | | | | | | | |
| 6. | Տարբեր տեսակետներ՝ խոցելիության հաղթահարման դրսևորմամբ | | | | | | | | | | |
| 7. | Տարբեր տեսակետներ՝ առանց որևէ մեկի գերակշռության | | | | | | | | | | |
| 8. | Թիրախավորման դեպքը փաստող հոդված՝ առանց դիրքորոշման արտահայտման | | | | | | | | | | |

**14. Իսկ Ձեր կարծիքով հենց լրատվամիջոցի կողմից սեփական դիրքորոշում արտահայտվո՞ւմ է հոդվածում: Եթե այո, ապա նշվածներից ո՞րն է առավել համարժեք բնութագրում այդ դիրքորոշումն ըստ ձեզ:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. | Առավելապես հովանավորչական խնցելիություն | | | | | | | | | | |
| 2. | Առավելապես նպատակաուղղված խնցելիություն | | | | | | | | | | |
| 3. | Առավելապես խնցելիության հաղթահարում | | | | | | | | | | |
| 4. | Ո՛չ, ներկայացված չէ սեփական դիրքորոշում | | | | | | | | | | |

**15. Արդյոք վերնագիրը պարունակո՞ւմ է որևէ դիրքորոշում:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1. | Այո՛, հովանավորչական դիրքորոշում | | | | | | | | | | |
| 2. | Այո՛, նպատակաուղղված դիրքորոշում | | | | | | | | | | |
| 3. | Այո՛, խնցելիության հաղթահարմանն ուղղված դիրքորոշում | | | | | | | | | | |
| 4. | Վերնագիրը փաստում է խնցելիությունը՝ առանց դիրքորոշման բացահայտման | | | | | | | | | | |
| 5. | Ո՛չ, վերնագրում խնցելիությունը մատնանշող դիրքորոշում չկա | | | | | | | | | | |

**16. Կա՞ հոդվածին կից նկար:**

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1. | Այո՛, ընդհանուր բնույթի պատկեր (օր.՝ ՄԻՊ-ի գրասենյակի նկար) | | | | | | | | | | |
| 2. | Այո՛, թիրախավորման դեպքը փաստող կամ դեպքի հետ անմիջական առնչվող լուսանկար (օր՝ բռնություն կիրառած ոստիկանի նկար) | | | | | | | | | | |
| 3. | Այո՛, թիրախավորման դեպքի հետ անմիջական կապ չունեցող, սակայն դրան հղվող պատկեր (օր.՝ հոդվածը «Սասնա ծռեր»-ի մասին է, բայց լուսանկարը «Էլեկտրիկ Երևան»-ից է) | | | | | | | | | | |
| 4. | Այո՛, ծաղրանկար | | | | | | | | | | |
| 5. | Այո՛, թիրախի կամ վերջինիս աջակիցների ընդհանուր նկարներ (փաստաբան, իրավապաշտպան, ընկեր, ակտիվիստ և այլք) | | | | | | | | | | |
| 6. | Այո՛, թիրախավորման դեպքը մեկնաբանող չեզոք ակտորի նկար | | | | | | | | | | |
| 7. | Թիրախավորմանը բացահայտ կամ լատենտ կողմնակից | | | | | | | | | | |
| 8. | Ո՛չ | | | | | | | | | | |

**17. Արդյոք ընդգծվո՞ւմ է թիրախի հատկանիշներից, բնութագրիչներից որևէ մեկը կամ մի քանիսը** (*կարող եք նշել բոլոր համապատասխան տարբերակները*):

| | | Հոդվածներն ըստ համարների | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* |
| 1. | Գենդերային բնութագրիչներ | | | | | | | | | | |
| 2. | Քաղաքական բնութագրիչներ | | | | | | | | | | |
| 3. | Կրոնական բնութագրիչներ | | | | | | | | | | |
| 4. | ԼԳԲՏ բնութագրիչներ | | | | | | | | | | |
| 5. | Չկա հղում որևէ բնութագրիչի | | | | | | | | | | |
| 6. | Այլ (մանրամասնել) | | | | | | | | | | |

**18. Ձեր կարծիքով ո՞վ/ի՞նչ է թիրախավորվում հոդվածում:**

| **Հոդվածներն ըստ համարների** | | *Ստորև մանրամասնել Ձեր ընտրած տարբերակը յուրաքանչյուր հոդվածի համար:* |
|---|---|---|
| 1. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 2. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 3. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 4. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 5. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 6. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 7. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 8. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 9. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |
| 10. | 1.Անձ<br>2.Գործողություն<br>3.Գաղափար | |

## Հավելված 4.
## Լուսաբանման թիրախ խմբերի/անձանց հարցաթերթ

Անհրաժեշտ է նախքան հարցման սկիզբը ֆոկուսավորել դեպքը, որի առնչությամբ տեղի է ունենալու հարցումը և հստակեցնել, որ հարցման առանցքում ոչ թե դեպքն է, այլ դրա լուսաբանումը մասնավորապես առցանց մեդիայում

**1. Խնդրում եմ համառոտ նկարագրեք դեպքը. ի՞նչ էր տեղի ունեցել:**

________________________________________________________

________________________________________________________

________________________________________________________

________________________________________________________

**2. Խնդրում եմ նշեք, թե ինտերնետային կայքերում նշված դեպքի լուսաբանման հետևանքում ինչքանո՞վ են տեղ գտել հետևյալ խնդիրները:**

| N | | Երբեք | Հազվադեպ | Հաճախ |
|---|---|---|---|---|
| 1. | Վիրտուալ հարթակներում թիրախավորված անձի/ընտանիքի/աջակիցների խմբի դեմ գործողության իրականացում/սոցիալական ցանցում էջի փակման փորձ, էլեկտրոնային հաշվի կոտրելու փորձ և այլն | 0 | 0.5 | 1 |
| 2. | Վիրտուալ հարթակներում թիրախավորված անձի/ընտանիքի/աջակիցների խմբի դեմ էմոցիոնալ անհանդուրժողականության դրսևորում /վիրավորանքներ, սպառնալիքներ, և այլն/ | 0 | 0.5 | 1 |
| 3. | Վիրտուալ հարթակներում թիրախավորված անձի/ընտանիքի/աջակիցների խմբի հետ դեպքի կապակցությամբ հաղորդակցություն/դեպքի մանրամասների ճշտման փորձ, որը տեղի չի ունեցել տվյալ անձի համաձայնությամբ և ցանկությամբ, այլ հարկադրված հաղորդակցություն է նշված դեպքի շուրջ/ | 0 | 0.5 | 1 |
| 4. | Լուսաբանման հետևանքով վիրտուալ հարթակներում թիրախավորված անձի/ընտանիքի/աջակիցների խմբի հետ դեպքի կապակցությամբ տեղի ունեցած և վերոնշյալ դատողությունների շրջանակներում չտեղավորվող որևէ այլ խնդիր - նկարագրել խնդիրը | 0 | 0.5 | 1 |

**3. Ձեր կարծիքով, արդյոք տարբերվե՞լ է դեպքի լուսաբանումը առցանց մեդիայում և հեռուստատեսությունում.**

1. Այո՛, տարբերվել է. հեռուստատեսությունն ավելի դրական/չեզոք է լուսաբանել
2. Այո՛, տարբերվել է. առցանց մեդիան ավելի դրական/չեզոք է լուսաբանել
3. Ո՛չ, չի տարբերվել

**11. Ստորև նշված լրատվամիջոցներից որի՞ն եք նախընտրում դիմել առավել հավաստի և վստահելի տեղեկատվություն ստանալու համար: Խնդրում ենք դասակարգել լրատվամիջոցներն ըստ վստահելիության և տեղեկատվության հավաստիության աստիճանի** *(մեկը կնշանակի ամենավստահելի, տասը՝ ամենաքիչ վստահելի):*

| | |
|---|---|
| Armtimes.com | |
| Aravot.am | |
| Iravunk.com | |
| Epress.am | |
| Tert.am | |
| Azatutyun.am | |
| News.am | |
| Lragir.am | |
| 1in.am | |
| A1plus.am | |



ISBN 978-9939-1-0552-9